Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19412

ԹԱԴԷՈՍ ՌՇՏԱՔԵԱՆՑ

ՍԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

ՎԷՊԻԿ

800
174-03
891.99
Ա-55

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մոմէա Վարդանեանի
1903

912 5012

ԲԱԳՐԱՏ ՈՍԿԵՐԻՉՅԱՆ
891.99
Ա-55
19 NOV 2010
20 JAN 2006

ՍԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

Վ Է Պ Ի Կ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանի
1903

11.02.2013

19412

Дозволено Цензурою. 25 Февраля 1903 г. Тифлисъ.

ՍԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

I

Խաւարը արագութեամբ յետ քաշեց Թիֆլիս քաղաքից իւր փեշերը, եկեղեցիների զըմբեթները փայլեցին առաւօտեան արշալոյսի տակ, և զանգերի «երրորդի» մեղմ զօղանջիւնը տարածուեցաւ քաղաքի մի ծայրից միւսը։—Քաղաքը զարթնում էր, կամաց կամաց փողոցների մէջ երևում էին մարդիկ, հետզհետէ բացւում էին տների դռները, որտեղից դուրս էին գալիս մարդիկ, երեսները խաչակնքում էին և գնում ամենն իւր գործի։

Դատարկ փողոցները լցւում էին մարդկանցով, կառքերով, բարձած կենդանիներով և ձիերով։

Մշակները կռնատակին իրանց հացը դրած խումբ խումբ գնում էին իրենց բանատեղին, որմնադիրները, ատաղձագործները և ուրիշ արհեստաւորները, որոնք արդէն գործի վրայ էին, շտապում էին փողոցների զանազան կողմերով,

իսկ որոնք դեռ գործ չունէին, շտապում էին դէպի հրապարակները գործ գտնելու։ Սայլակներով կրում էին գաջը, աղիւսը, հողը։ Սայլապանը վազում էր դէպի երկաթուղու կայարան իսկ խանութ ունեցողները շտապով բաց էին անում իրենց խանութները, մաքրում, աւելել տալիս, թոզերը սրբում և սպասում «ուիթայի» (առաջին գնողին)։

Մի տեսակ սիրուն, գործունեայ, եռուն կեանքի պատկեր է ներկայացնում Թիֆլիսը առաւօտեան արշալոյսին, երբ բանւոր, գործունեայ, ստոր դասակարգին պատկանող մարդիկ արևի անդրանիկ ճառագայթների հետ զարթնելով շտապում են իրենց գործին։—Այդ ժամանակ Թիֆլիսի փողոցների մէջ չէք գտնի *շլնապան* գլխին, *արոսատը* ձեռքին, օսլայած շապիկը հագին, կոկ հագնուած *ֆրանտների*. դրանց չէ պատկանում առաւօտուայ այդ ժամը, դրանք այդ միջոցին ննջում են անուշ ու քաղցր քնով։

Սիրուն է այդ ժամը և մարդու հոգու վրայ թողնում է խոր անջնջելի տպաւորութիւն, տեսնելով թէ ինչպէս ցնցոտիների մէջ փաթաթուած մշակը անցնելով եկեղեցու դռան մօտով հանում է գլխարկը, եկեղեցու դուռը համբուրում, լի կրծքով շունչ քաշում առաւօտուայ թարմ օդը և իւր երգը մրմնջում, բայց որքան շուտ փոխում է իւր հոգու տրամադրութիւնը այդ երգը երգելով, նա յանախ յիշում է իւր

հայրենի երկիրը, այնտեղի սիրուն ու պայծառ առաւօտը, իւր կինն ու որդիքը, սիրուն դաշտերն ու ձորերը... ա՜խ, սիրուն է իւր երկիրը, անտէր մնայ օտարութիւնը, քիչ յետոյ կը տընքայ արդէն ծանր բեռան տակ...

Եկեղեցիների երբորդների հետ զարթնում են չարաճճի ճնճղուկները և իրենց ծլվլոցը սարքում, այն ինչ աքաղաղները իրանց ծուղրուղուն կանչելով աւետում են արշալոյսի յաղթութիւնը։

Ցած թռան հաւերը թառից և սկսան աղբը քչփորել, հատիկներ որոնել։ Ահա աքաղաղը կրակացրեց, նա ինչ որ գտել էր. հաւերը վրայ վազեցին դրա յետևից և որդի համար կռիւ սկսան, քիչ յետոյ որդի հետքն անգամ չմնաց, հաւերը պատառ-պատառ արին որդին և յաղթող հաւերից ամեն մէկը կուլ տուեց որդի մի կտորը..

Որդի կռիւը նոր էր վերջացել երբ աքաղաղը մի ինչ որ զգուշացուցիչ ձայն հանեց, հաւերը ականջները սրեցին և ապա ամեն մէկը մի բանի տակ մտան. վտանգը մօտ էր. բարձրումը թռչում էր ուրուրը։

Քիչ յետոյ բացուեցան տան սենեակի դռները և քնաթաթախ դուրս եկաւ բակը տան տիկինը, հաւերը վրայ վազեցին նրան. նրանք սովոր էին առաւօտեան կուտի։ Տանտիկինը, որ մի պառաւ կին էր տհաճութեամբ քչա արաւ, մտաւ խոհանոց և կրակ վառեց հեշտահեռի հա-

մար և ապա մի բուռը գարի ածելով հաւերի առաջ ինքն իրեն ասաց՝ «այսօր բարեկենդան է այս մի հաւը պէտք է մորթել», ասաց նա և մատնացոյց արաւ մի հաւի, որը ձու չէր ածում և հազիւ իւր զոյութիւնն էր պահպանում։ Անցաւ մի քանի ժամ և նա արդէն մորթած էր։ Բայց այդ միջոցին երբ պառաւը իւր հաւն էր մորթում դրսի փողոցի կերպարանքը արդէն փոխուել էր։ Արևը արդէն բաւական բարձրացել էր, իսկ փողոցների բազմութիւնը շատացել, բանուոր դասակարգը քշացել էր, իսկ նրանց տեղ անցնում էին փոքրիկ տղաներ և աղջիկներ, որոնք զանազան ուղղութեամբ էին գնում՝ ամենը իւր դպրոցը։ Աշակերտների և աշակերտուհիների հետ միասին երևում էին նրանց ուսուցիչներն ու վարժուհիները, ծառայողներն ու աստիճանաւորները։ Բանուոր դասակարգի գործիքների՝ քլունգի, սրոցի, սղոցի և նրանց ցնցոտիների և մաշուած հագուստի փոխարէն այժմ տեսնւում էր աշակերտների և աշակերտուհիների ձեռքի գրքերը, վարժապետների ձեռքին մի կիտուրս տետրներ, պորտֆէյլներ, օսլայած շապիկներ, մաքուր զգեստով, շլեապով մարդիկ և կակարդով գլխարկներ։

Դրանք էլ էին գնում գործի, միայն դրանք երգեր չէին մռմռում այլ լուռ, աչքերը ցած ձգած գլանակը բերաններին, ձեռնափայտերը շարժելով շտապում էին առաջ։

Մնում էր տանը միայն մի դասակարգ— աղաների և անգործ մարդկանց դասակարգը, որոնք ծանր ու բարակ վեր կենալով անկողնից կամաց-կամաց խմում են պատրաստ թէյը, և ապա զարդարուելով կէսօրուայ դէմ լցնում են բուլվարներն ու այգիները։

Առաւօտուայ ժամը 7½ էր։

Ծխական դպրոցի ուսուցիչ Միքայէլ Հայրապետեանը կռնատակը դնելով մի կապոց աշակերտների տետրներ կամաց կամաց իւր քայլերն ուղղեց դէպի դպրոց։ Կէս ժամից յետոյ կըսկսուէր դասը, հարկաւոր էր շտապել։

Արդարև այսօր նա ուզում էր շուտ հասնել ուսումնարան, թէև ինքը գիտէր որ որքան դանդաղ գնայ, տաս րոպէում տեղ կըհասնի և թէ դասը 8 ժամից վաղ չի սկսուի. նա այդ գիտէր, բայց շտապում էր, թէ ինչու, ինքն էլ չգիտէր։ Այդ միջոցին նա ոչ տխուր էր, ոչ էլ ուրախ, բայց թէ զգում էր, որ իւր հետ մի ինչ որ կատարւում էր, մի ինչ որ որդ, ճիճու կարծես բուն էր դրել իւր սրտում և նրան հանգստութիւն չէր տալիս։ Նա այդ ժամանակ ոչ մի բանի վրայ չէր մտածում, ոչ դասի, ոչ իւր վրայ, ոչ բարեկամի և ոչ ծանօթի. նրա գլխի մէջ ոչ մի միտք չէր կանգնում, և ոչ մի իրողութեան դէպք չէր կենդրոնանում նրա ուղեղի մէջ. միայն զգում էր, որ ինքը անհանգիստ է, որ իւր հետ պատահում է մի փոփոխութիւն։

Նա չէր զգում մինչև անգամ թէ ինչպիսի ահագին քայլերով առաջ էր գնում. նա անգիտակցօրէն էր բարևում իւր այն աշակերտներին կամ ծանօթներին, որոնք ճանապարհին բարևում էին իրան։

Հասաւ դպրոց. ընկերներին բարևեց, որոնք իսկոյն նկատեցին նրա շփոթութիւնը։

—Հը՞ Միքայէլ, ինչ է պատահել քեզ, ինչու ես շփոթուած երևում։

—Ե՛ս, շփոթուած, բան չունի՛ք, ասաց կարմրատակելով Միքայէլը, բայց ընկերները իսկոյն դլխի ընկան որ մի բան կայ, բայց Միքայէլը թագցնում է։

—Հը՞ ասա՛, թէ խէր է մենք էլ ուրախանանք, փող հօ չե՞ս գտել։

—Է՞հ, դուք էլ, ինչեր էք խօսում, փողը իւղոտ մարդու մօտ կերթայ, մենք իւղ ո՞ր տեղ ունինք, ասաց ծիծաղելով Միքայէլը։

—Էլի՛ մի բան պատահել է քեզ։

—Ոչինչ էլ չի պատահել։

Խօսքը ուրիշ առարկայի մասին անցաւ և քիչ յետոյ ամեն վարժապետ իւր դասատուն մտաւ։ Միքայէլն էլ իւր դասատուն մտաւ և մոռացաւ այն, ինչ որ պատահել էր իւր հետ, և որ այնպէս շփոթել և այլայլել էր իրան։

II

Թիֆլիսի Ն. փողոցում, ուր ապրում էր Միքայէլ Հայրապետեանը, ճիշտ դորա տան դիմաց, մի աղքատիկ տան մէջ, ապրում էր դարբաղ Գևոի այրին, տիկին Մարթան իւր միակ աղջկայ՝ Սօնայի հետ։ Չորս տարի էր ինչ որ այրիացել էր տիկ. Մարթան և այդ չորս տարուայ ընթացքում ամեն հոգսը ընկել էր միայնակ իւր վրայ. նա ամեն ճիգ էր թափում մի կերպ տունը կառավարելու և իւր հասունացած աղջկան—Սօնային մի լաւ իւղոտ տեղ մարդու տալու։

Տիկին Մարթան մօտ քառասուն տարեկան կին էր նա այնպիսի ճարտար լեզու ունէր, որ շատ կանանցից միայն քչերին է տուած. սիրում էր ամեն տեղ գլուխը կոխել, ամեն բան իմանալ և ամեն վիճաբանութեան ժամանակ իւր կարծիքը յայտնել։ Վա՛յ էր եթէ մէկը դրա հետ հակաճառէր, էլ դրա լեզուի տակից չէր ազատուիլ նա, էլ բանբասանք չէր թողնիլ, որ չը-թափէր խեղճի դլխին։ Թէև նիւթական ամենանեղ վիճակի մէջ էր գտնուում, բայց այդ բանը ոչ ոք չէր իմանում։ Տիկին Մարթան այնպիսի ճարտարութեամբ կառավարում էր տունը, որ տեսնողը զարմանում էր և ենթադրում թէ հանգուցեալ մարդուց շատ փող է մնացել և այդ

փողով կառավարում են թէ ինքը և թէ իւր աղջիկը. իսկապէս տիկին Մարթան կառավարում էր իւր և աղջկայ ձեռքի աշխատանքով և այդ չնչին աշխատանքն էլ գործ էր դնում այն տեսակ բաների վրայ, որ հարևանների աչքը շլացնում էր։ Նա սիրում էր տունը կոկ պահելու, լաւ հագնուելու թէ ինքը և թէ աղջիկը. իսկ թէ ինչով էին կերակրւում այդ ոչ ոքի յայտնի չէր, թէև ինքը միշտ պարծենում էր թէ օրական երկու տեսակ կերակուր է ուտում։ Նա փախչում էր աղքատ, խեղճ երևալուց, ըմբռնելով ժամանակիս ոգին, որ աղքատ մարդու երեսին չեն նայում, ինչքան էլ նա նամուսով, պատուով ապրի։ Տիկին Մարթան հրճւում էր իւր աղջկայ՝ Օնայի վրայ, որ նոր մտել էր տասն և եօթերորդ դարունը։ Նա չէր յուսահատվում որ փող չունի, քանի որ ըմբռնում էր որ իւր աղջիկը իսկական մի գանձ է, քանի որ ամեն մի հարուստ փեսացու գլուխ կբխոնարհէր նրա առաջ և բացի առանց օժիտի տանելուց ինքն էլ մէջը կբլվլվայ։ Ցիրաւի գեղեցիկ էր Օնան։

Նա ունէր նուրբ կազմուածք, վայելուչ հասակ, գեղեցիկ սիրուն դէմք իւր սիրուն սև սաթի նման աչքերով, բարակ, քնքուշ յօնքեր, փոքրիկ բերան, վարդագոյն շրթունք, խոր տպաւորող հայեացք։

Ով մի անգամ նայում էր նրա երկնային

դէմքին, էլ չէր ուզում աչքերը հեռացնել նրանից, այնքան սիրուն էր նա և այնքան գրաւիչ։ Իսկ եթէ պատահէր որ Օնան իւր սևորակ աչքերը յառէր մէկի վրայ, նա տեղն ու տեղը հալումաշ կըլինէր և աչքերը գետին կըձգէր։ Անգին մարգարիտ էր Օնան իւր մօր համար և այդ է պատճառը, որ տիկին Մարթան միշտ կրկնում էր աղջկան. «Օնա-ջան, դու այս նեղ սենեակների լայնդ աղջիկ չես, այլ պալատների համար ես ստեղծուած, ինչ ասեմ Աստուծուն, որ մեզ խեղճ ծնեց, որ մեզ մեծ հարստութիւն չտուեց»։ Նա միշտ դժգոհ էր իւր վիճակից, միշտ գանգատուող իւր բաղդից։ Միշտ ուզում էր մեծանալ, հարստանալ, մեծ և նշանաւոր տիկինների հետ ոտ ձգել, բայց այդ նրան չէր յաջողում, նախ միջոցների սղութեան և երկրորդ դաբաղի կին լինելու պատճառով։

Թէև տեսնողներ և հաւանողներ եղան Օնային նաև հարուստ դասակարգի երիտասարդներից, բայց իմանալով ում աղջիկ լինելը, թողեցին իրենց մտադրութիւնները առաջարկութիւն անելու Օնային և նա դեռ մնում էր իւր բաղդին։

Տիկին Մարթան շտապում էր շուտով աղջկան նշանադրելու, շտապում էր ոչ թէ նրա համար, որ ժամանակը անցնում էր, ոչ, այլ ինքը ապրել էր ուզում, հանգիստ ու անդորը կեանքի էր փափագում. իւր «նեղ» կեանքը իրեն արդէն

ձանձրացրել էր, նա ուզում էր վայելել։ Այդ տենդով էր բռնուած նաև Սօնան, որ երկրորդ դասարանից դուրս գալով մի կողմը թողից գիրքն ու դասը։ Մայրը նրան դաս էր տալիս, որ ժամանակիս արժանաւորութիւնը ուսումը չէ, այլ արտաքին գեղեցկութիւնը, այդ է միայն գնահատւում, իսկ մնացածը դատարկ բաներ են։

Սօնան արդէն հասունացած աղջիկ էր. նա սրտով ու աչքերով արդէն պտրում էր իւր ապագայ ընկերին, նա դեռ այնքան նշանակութիւն չէր տալիս հարստութեան, այլ պտրտում էր սիրուն և վայելուչ դէմքով երիտասարդի, թէև գիտէր, որ առանց փողի կնանք չի կարելի վարել։

Նա արդէն հակուած էր իրենց դիմացի հարևան Միքայէլ Հայրապետեանի կողմը և իւր մտքում արդէն իւր նշանածն էր համարում։

III

Սորաբողբոջ կնանքի թարմ ծաղիկները արդէն բացուած էին և անուշութիւն էին բիւրում. այդ կեանքը սէր էր պահանջում, երկնային Պետից առաքուած բնատուր սէր։ Ա՜խ, սիրուն է այդ երկնային սէրը, որ նոր բացուած կոկոնների մէջ է արծարծւում... Հեւու դորանից կեղծիք. ժանտ ատելութիւն, զզուելի հակակրութիւն, ստոր խաբէութիւն, աչքը չէ որ այդտեղ տեսնում է, միտքը չէ որ ըմբռնում է, այլ սրտերն են որ խօսում են լուռ, անձայն, բայց սրոնք հասկանում են միմեանց աւելի լաւ քան լեզուով խօսածները։ Այդ տեղ ահա, սրտերի այդ մութ, բայց սրբազան խորքերումն է ծնւում սէրը, այդտեղ է զարգանում ընդլայնւում ու տարածւում առանց ուշք դարձնելու մարդու այն խելքին, գիտակցութեանը, որով կառավարւում է մարդու կամքը և Միքայէլ Հայրապետեանը չլսեց իւր գիտակցութեանը և գերուեցաւ Սօնայի ազդող հայեացքից. նա արդէն գերի էր իւր սրտին, որ գաղտնապէս խօսում էր Սօնայի սրտի հետ։

Սիրուն դէմքով, պայծառ ու զուարթ աչքերով, ուրախ ու զուարթ հոգով Միքայէլը ամեն առաւօտ գնում էր դպրոց և այնտեղ՝ անմեղ մանուկների մէջ իւր հոգու վայելքները վա-

յելում։ Նա ապրում էր նրանց հետ, նրանց աշխարհում, նրանց հետ լալիս, նրանց հետ ուրախանում։ Մանկական աշխարհից դուրս ոչինչ չէր փնտռում և ոչինչ չէր ցանկանում... իր իդեալը այդ էր, ապրել նրանց աշխարհում, առաջնորդել նրանց դէպի բարին, դէպի ազնիւն ու վսէմը և դէպի լոյսը... ու նա ապրում էր հանգիստ, անխռով և գոհ, այն ինչ տարիքն անցնում էին և դէմքը աւելի խոհուն և լուրջ կերպարանք ստանում։ Միքայէլն արդէն քսան և չորս տարեկան էր։ Նիհար բայց կարմրաթուշ դէմքով, գեղեցիկ սև սև աչքերով, որոնք տեսնողին յարգանք էին ազդում։ Ն... փողոցում նա վարձած ունէր երկու դեղեցիկ, մաքուր սենեակ ամսական տասն ռուբլի վճարով, ուր սովորութիւն ունէին երեկոները երբեմն ընկերների հետ ժամանակ անցկացնելու, վիճելու, խօսելու զանազան հասարակական հարցերի մասին և այդ երեկոներից յետոյ ընկերների հետ միասին վայելելու ընթրիքը, որի սեղանի վրայ միշտ փայլում էր իր սեպհական այգուց ուղարկուած գինին և չուչխելանները։

Համեստ, բայց բաւարար կեանք էր վարում նա ի նկատի ունեցած այն հանգամանքը, որ բացի ուսուցչական ռոճկից նա ունէր Թելաւ քաղաքում սեպհական այգի ու կալուածք, որի եկամուտի մի մասը խնայում էր, իսկ միւս մասը իր ընկերների հետ էր կիսում։

Ապրում էր անհոգ, հանգիստ և իր մտածութեանց առարկան միայն իր աշակերտներն էին և ընթերցանութիւնը։

Բայց ինչ կայ մարդուս կեանքի մէջ մնայուն. ամեն բան փոխւում է՝ թէ հանգամանքները, թէ դրութիւնները և թէ մարդուս նոյն ինքն սիրտը—այն սիրտը, որ տրամադիր է ցաւելու և ուրախանալու, տրտմելու և զուարճանալու, սիրելու և ատելու... Ո՞վ կարող է շղթայել մեր զգացմունքները, որ յանդուգն կարող է արգելել սրտին լալու երբ նա տրամադիր է արցունք թափել, որ անիրաւը կը կաշկանդի մեր սրտերի այն զգացմունքները, որոնք տրամադիր են սիրելու։ Միքայէլի սիրտը սիրոյ էր համակուած և այդ սերմերը ընկան նրա սրտի մէջ։ Շատ անգամ տեսել էր Միքայէլը Սօնային, բայց ոչ մի անգամ առանձին ուշադրութիւն չէր դարձրել. նա տեսել էր ու անցել առանց անգամ յիշելու նրա դէմքի գծագրութիւնը, բայց այն օրը առաւօտ, երբ նա դպրոց էր գնում, նայեց Սօնային՝ ուղիղ նրա աչքերի մէջ, որտեղ տեսնւում էր նրա սիրտը։ Այդ րոպէից նրա սրտի մէջ մըտաւ մի իր, մի անտեսանելի, աներևոյթ բան, որ չփոթեց նրան և նա լուռ իր քայլերն առաջ ուղղեց։

Նա զգաց որ իր հետ մի ինչ որ պատահեց, որ իր սրտի մէջ շարժուեց մի որդ, զգացմունքի մի թել և մի կերպ տրոփաց այնպէս ինչպէս թառի

սիմ, և այդ շարժումը փոխեց իւր տրամադրութիւնը, իւր մտածողութեան բոլոր ելևէջները։

Դպրոցից վերադարձաւ և ակամայ նայեց դէպի այն պատուհանը, ուր նստած էր Սօնան և որտեղից ուղարկեց իւր սուր հայեացքը։ Նա կրկին իւր տեղն էր նստած և կարծես իւր վերադարձին էր սպասում։ Միքայէլը նայեց նրան, նրանց հայեացքները կրկին հանդիպեցան և նրանք, երկուսն էլ իրանց ամօթխած հայեացքները իջեցրին։ Միքայէլը տուն մտաւ, սեղանի վրայ համարեա շպրտեց դպրոցից բերած տետրակները և ընկնելով մահճակալի վրայ երեսը ծածկեց բարձի մէջ։ Այդ ժամանակ նրա գանգի մէջ անցան հարիւրաւոր մտքեր, բայց ոչ մի միտք կանգ չառաւ նրա գլխի մէջ, այլ յաջորդաբար, մէկը միւսի ետևից անցնում էին այդ մտքերը նրա գլխի մէջ և ոչ մի հետք, ոչ մի նշան չէին թողնում այնտեղ, այն ինչ ամբողջ գանգի ծաւալը բռնել էր Սօնայի պատկերը, որ ժպտում էր այդ մտքերի դէմ։

Անցաւ փոքր ժամանակ. Միքայէլը ինքն իրան զսպեց ու վեր թռաւ տեղից. նա ձեռքը թափահարեց։

—Է՜, ինչ յիմարութիւն է սա, ինչեր եմ անում, ասաց նա և կրկին մօտենալով պատուհանին նայեց դէպի դիմացի տունը։ Բայց իւր պատուհանից չէր երևում Սօնայի պատուհանը և այդ հանգամանքը տհաճութիւն պատճառեց Միքայէլին և նա կարծես բարկացաւ էլ ու յօնքերը կիտեց։

Փոքրիկ ծառան ճաշը բերեց նա անգիտակցօրէն ուտում էր, բայց զգաց, որ ինքը մենակ չէ, որ ինքը լուռ չէ, այլ իւր սրտի մէջ նստած է մէկը և թէ ինքը խօսում է նրա հետ... Այնպէս քաղցր, այնպէս անուշ էր սրտի այդ լուռ զրոյցը, որ կարծես երկնային անմահ հրեշտակների զրոյց լինէր դա...

Եւ այնուհետև Միքայէլի լեզուն լռեց ու սիրտը սկսեց խօսել լուռ, անձայն և անտեսանելի...



IV

Տիկին Մարթան ազատ էր թողել իւր աղջկան ամենի հետ զրոյց անելու, ծանօթանալու, բայց ծածուկ հետևում էր իւր աղջկան։ Սօնայի ոչ մի քայլը, ոչ մի մտադրութիւնը գաղտնիք չէր Մարթայի համար, մինչև անգամ Մարթան կարդում էր իւր աղջկայ մտքերը, գիտէր թէ նա ինչ է մտածում. ում վրայ քաղցր կամ դառն աչքով է նայում։ Քայլ առ քայլ հետևում էր աղջկան և այնտեղ որտեղ տեսնում էր թէ ոչինչ չի դուրս գալ մէջտեղից-օգուտ չկայ, նա յետ էր քաշում իւր աղջկան, իսկ որտեղից գոնէ յուսոյ մի փոքր նշոյլ էր երևում, նա նրան առաջ էր քաշում, բայց այնպէս որ աղջիկն անգամ չէր իմանում թէ իւր մայրը զրդում է իրան։

Սօնայի և Միքայէլի աչքով յօնքով խօսելն էլ նրանից գաղտնի չմնաց. նա շատ շուտ գլխի ընկաւ, նկատեց այդ բանը, բայց լուռ մնաց, դեռ իւր մտքումը ցածր ու բարձր արաւ, կշռեց Միքայէլին, թէ արդեօք Միքայէլը յարմար է իրեն փեսայ դառնալու, օգուտ կայ արդեօք իրան համար, եթէ Միքայէլը փեսայ դառնայ։ Մարթան սկսեց դաղտնապէս հետևել Միքայէլին, նրա ղվաթը (նիւթական ոյժը) փորձելու։

Նա իմացաւ նրա ռոճկի քանակութիւնը, որ հասնում էր 40—50 մանէթի և քիթը վեր քաշեց։ Դրանով փոր չի կշտանայ, մտածեց նա։ Հարկաւորը էր անշարժ կալուածք, և այդ էլ գտաւ. նա տեղեկացաւ, որ Միքայէլը ծնողներ չունի և թէ իւր հայրենիքում ունի տուն և այգի, որոնք արժէին առնուազն 4—5000 մանէթ։ Ուրախացաւ Մարթան, տեսաւ որ Միքայէլի մէջ իւղ կայ, բոլորովին անհիւթ չէ և թէ իւր տեսակէտից վատ փեսայու չէ։

Այդ տեղեկութիւնները ժողովեց Մարթան և հանդիստ իւր բանին կացաւ, առանց իմաց անելու Սօնային թէ ինքը նրանց գաղտնիքը գիտէ։

Սպասենք, մտածեց ինքն իրան Մարթան, ինչ կայ շտապելու. այս մէկը ձեռքներիցս չփախցնենք, եթէ սրանից լաւը կը պատահի, հօ լաւ, իսկ եթէ չէ սրան էլ պինդ պահենք։

Այսպէս էր մտածում Մարթան, այն ինչ օրերը մինը միւսի ետևից թռչում էին արագ, իսկ սրտերը ստէպ ստէպ իրար հետ խօսում, իրար միտք հասկանում, իրար զգում, զգում և համբուրուում։

Բայց մարդկանց աչքերից գաղտնի ոչինչ չի մնալ։ Որքան սրտերը լուռ խօսան, որքան նրանք ծածկեն իրանց սրտերը, գաղտնի զրոյցը, այնու ամենայնիւ երիտասարդ սրտերի ե

ռուն արիւնը, բորբոքուող սրտերը նրանց կը մատնէ։

Սէրը բորբոքուեց թէ չէ, սիրող պատանիների աչքերն էլ ուրիշ բան-չեն փնտրում բացի այն, ինչի վրայ որ մտածում են։ Նրանց աչքին էլ ոչ մի բան չի գալիս, բացի սէրը։ Սէրն է, որ հուրհուրատում է նրանց աչքերում և սիրոյ այդ հուրհուրատելը գաղտնիք չէ մնում սրատես աչքերից, այդ է, որ մատնում է սիրողներին, դա է, այդ աչքերն են, որոնք բաց են անում սիրող սրտերի ներքին աշխարհը...

Եւ Մարթան էլ վախեցաւ, որ հարևանները կըտեսնեն այդ բանը և թէ կըսկսուի զրոյցն ու բամբասանքը—կանացի անվերջ զրպարտանքը, և Մարթան մի օր կանչեցրեց նրան։

—Սօնա-ջան, ինչի ես այս վերջին ժամանակ այդպէս տխուր։

—Տխուր, ես, մայրիկ, ամենևին տխուր չեմ, պատասխանեց աղջիկը։

—Էլի, Սօնա-ջան, մի բան կայ, ոչ ոք հօ չէ բարկացրել քեզ, էլ ոչ երգում ես, էլ ոչ խօսում, էլ ոչ դրուստ ուտում. ինչ է պատահել քեզ, հոգիս, ասա, սիրուն աղջիկս։

—Է՜հ, մայրիկ, ինչեր ես ասում, ինձ ոչ ոք ոչ բարկացրել է և ոչ էլ տխուր եմ։

—Էլի, Սօնա-ջան, դու մի գաղտնիք ունիս և ինձանից թաղցնում ես։

Սօնան կարմրեց. նա զգաց, որ մայրը գլխի է ընկել։

—Ես ոչ մի գաղտնիք չունիմ, վճռապէս ասաց նա։

—Ի՞նչպէս չունիս, մի՞թէ ես չգիտեմ, էլ ինչու ես ինձանից թաղցնում, մի՞թէ քո մօրը այդպէս ես սիրում։

—Ի՞նչ գաղտնիք, մայրիկ-ջան, ես քեզանից ինչ բան պէտք է թաղցնեմ, ուրիշ ո՞վ ունիմ քեզանից աւելի։

—Դէ՞ որ այդպէս է, ասա, էլ մի թաղցնի, ես հօ ամեն բան գիտեմ։

—Ի՞նչ, մայրիկ-ջան։

—Վարժապետին դու սիրում ես, թէ՞ չէ։

—Է՜հ, մայրիկ, այդպիսի բաներ մի խօսիր, ասաց Սօնան և քիչ մնաց լար։

—Չէ՞, ջահել ես, աղջիկս, կարող ես խաբուել, փորձանքների մէջ ընկնել, ինչ որ անում ես, ինձ ասա, թէ չէ մի անզգոյշ քայլ կանես և խօսելու առարկայ կըդառնանք, անուններս կը կոտրուի. հօ գիտես մեր հարևանների հալը, զրանք էլ այդ տեսակ բաների են բանդ։

—Ես ոչինչ չեմ արել, մայրիկ, որ խօսելու առարկայ դառնամ։

—Գիտեմ, գիտեմ, ոչինչ չես արել, բայց վարժապետի հետ աչք ու յօնքով ես խօսեցել։ Ո՞վ է դա, որ դրա հետ ուզում ես կապուել, դա քո ամուսինը չի կարող դառնալ, զուր մտքիցդ

հանիր, ասաց Մարթան և սուր թափանցող հայեացք ձգեց աղջկայ վրայ։

Սօնան դողդողաց, կարմրեց, արիւնը գլուխը խփեց, նրա սիրտը բողոքեց այդ բանի դէմ և նա միայն ասաց.

—Ինչու, մայրիկ։

—Ինչու, շատ պարզ, որովհետև նա կին չի կարող պահել։

—Բայց նա խելօք տղայ է։

—Էլի կրկնում եմ, որ ներկայ ժամանակիս խելքը չի պահում մարդուն, այլ փողը։

Սօնան լուռ կացաւ և ոչինչ չպատասխանեց։ Նրա դիտակցութիւնը այնքան բարձր չէր հասնում որ կարողանար մօր այդ խօսքերին պատասխան տալ, նա կարծես համաձայնեց, հակառակ իւր սրտի, որ խելքը առանց փողի ոչինչ է։

—Այդպէս աղջիկս, դու վարժապետին մըտքիցդ հանիր, դու պատճառ մի դառնայ, թող եթէ նա քեզ սիրում է, թող առաջարկութիւն անի, դրա համար ձև կայ, օրէնք կայ և ոչ թէ դու գնա նրա դիրկը ընկիր։ Ի՞նչ ես դարդ անում, քեզ նման սիրուն աղջիկը տանը չի մնայ, հազարաւոր երիտասարդներ քեզ տեսնելով խելքները թռցնում են։

Սօնան ոչինչ չպատասխանեց և մտածութեան մէջ ընկաւ։

V

Միքայէլը տանջւում էր. հետզհետէ նրա մտքի էութիւնը կենդրոնանում էր Սօնայի վրայ, նորանից դուրս էլ ոչինչ չէր փնտռում, ոչինչ չէր մտածում։ Հեռու, շատ հեռու մղուեցաւ կրթութեան գործը, մանկական աշխարհը, ամեն բան հանուեցաւ նրա գլխից և այդտեղ լայն ծաւալով նստեցին միայն սիրոյ մտապատկերները։

Նա երբեմն կանգ էր առնում, խելքը գլուխը ժողովում և մտածում իւր դրութեան վրայ։ Նա զգում էր, որ ինքը այլայլուած է, որ սիրահարուած է։

—Ահա այն սէրը, որի վրայ ես երբեմն ծիծաղում էի, ասում էր նա, ահա նա. ես զգում եմ նրան, նա զրկել է ինձ իւր պինդ և երկաթի ձեռների մէջ, սեղմում է ինձ իւր բոցավառ զրկի մէջ և քրքրում ու տակն ու վրայ անում սիրտս... Ո՜հ ծանր է, շատ ծանր այս դրութիւնը, դրութիւն, որի վրայ ամենքը սառնասիրտ են նայում, որի վրայ ծիծաղում են ամենքը այնպէս, ինչպէս ես ծիծաղել եմ շատերի վրայ... Աստուած իմ, կանցնի՞ արդեօք այս դրութիւնը, թէ հետզհետէ կը սաստկանայ. բայց ես առանց նրան չեմ կարող մնալ, ոչ մի ժամ,

ոչ մի բոպէ, ոչ մի վարկեան, նա նստած է սրբ
տիս մէջ, իսկ ես նրան չեմ կարողանում գրկել
նա խօսում է ինձ հետ սրտիս մէջ, բայց չեմ
լսում նրա ձայնը... Ի՞նչ է դա, հրեշտակ թէ
դև, անուշ է հնչում նրա ձայնը. թէ գեհենի
ձայն ունի, հոգի է նա անմեղութեան, համեստ
ութեան, թէ սատանայ և խորամանկ, ես այդ
չգիտեմ, բայց թէ նա իշխում է ինձ, բայց թէ
ես այս բոպէիս նրա ստրուկն եմ, գերին եմ
ահա այդ է ճշմարտութիւնը։ Խելքս կորցրեց
դատելու ընդունակութիւնը. այժմ մի բան միայն
մի իղձ միայն ինձ տանջում է և այդ Սօնային
ինձ սեպհականացնելն է։ Բայց ինչպէս, ո՞ւմ մի
ջոցով, ինքս գնամ ընկնեմ Սօնայի և նրա մոր
ոտքերը և բանամ սիրտս—անկարելի է։ Բարե
կամ-ազգական չունիմ այստեղ։ Ա՜խ, եթէ մայրս
կենդանի լինէր, այն ժամանակ այսպէս չէի
տանջուի...

—Ո՞վ ունիմ աշխարհիս երեսին, որ իմ մա
սին հոգայ, իմ վշտերս սփոփէ. եթէ մեռնելու
լինիմ գերեզմանիս վրայ լայ, ողբայ...

Այդպէս մտածում էր Միքայէլը, արագ
շրջելով իւր սենեակի մի ծայրից միւսը, առանց
նկատելու որ արդէն մթնել էր և թէ հարկաւոր
էր վառել սենեակի լամպարը։

Ներս մտաւ իւր տանտիկինը, որ 35 տա
րեկան մի բարի կին էր. նա վերջին ժամանակս
զարմացել էր Միքայէլի օտարոտի վարմունքի

վրայ, բայց սիրտ չէր անում հարցնելու Միքա
յէլից նրա տխրութեան պատճառը։ Այս երեկոյ
միայն տեսնելով որ Միքայէլը արագ շրջում է
սենեակում և դեռ ճրագը վառած չէ, նա ներս
մտաւ և վառելով լամպարը հարցրեց.

—Հը՞, վարժապետ, ինչու լամպարը չէք
վառել։

Միքայէլը կանգնեց և շփեց իւր ճակատը,
կարծես մի ինչ որ ուզում էր մտաբերել։

—Ինչպէս... հարցրեց Միքայէլը։

—Ես ասում եմ ինչու լամպարը չէք վառել,
հիւանդ հօ չէք, ինչ է պատահել ձեզ։

Մի միտք կայծակի նման անցաւ Միքայէլի
գլխով և ցրեց նրա տխուր մտքերը։ Նա շտա
պով նստեց աթոռի վրայ և ասաց.

—Մայրիկ, նստեցէք մի բոպէ, ես ձեզ հետ
գործ ունիմ։

—Ասացէք, որդի, ինչ գործ ունիք։

—Դուք ճանաչում էք մեր դիմացի կենոցի
աղջկան։

Տանտիկինը մատը կծեց, նա մի բան գլխի
ընկաւ։

—Հա, ինչպէս չէ, դաբաղ Գէվոյի աղջկան՝
Սօնին։

—Դաբա՞ղ... ինչպէս թէ դաբաղ։

—Հա՛, դաբաղի աղջիկ է, բայց հայրը վա
ղուց մեռած է, այժմ կենում է իւր մօր՝ Մար
թայի հետ։

—Հա հենց նա է, ինչպիսի աղջիկ է։

—Շատ լաւ, սիրուն, շնորքով աղջիկ է, ինչ է որ։

—Էլ ինչ ինչ է, մայրիկ, ես գժուածի պէս սիրում եմ նրան, դու պէտք է միջնորդես և այդ բանը գլուխ բերես, թէ չէ եթէ նա իմ կինը չլինի, ես դարդից կը մեռնեմ։

—Էլ ինչի՞ ես մեռնում, որդի, նա ջահել աղջիկ, դու ջահել տղայ, էլ ինչէ է ուզում նրա մայրը, քեզանից էլ լաւ փեսայ որտեղ կըգտնի։

—Ուրեմն խօսք ես տալիս այդ բանը գլուխ բերելու։

—Ինչ որ իմ ձեռքից կը գայ կաշխատեմ։

—Իսկ աշխատանքդ չեմ մոռանայ։

VI

Միքայէլի տանտիկինը ներս մտաւ Մարթայի մօտ։

—Այ կնիկ, գիտես ինչի համար եմ եկել։

—Հը՞, ինչ կայ, խէր լինի։

—Խէր է ու այն էլ ինչպէս։

—Ասա տեսնենք։

—Վարժապետը քո աղջկան գժուածի պէս սիրում է և ինձ ուղարկեց, որ քո համաձայնութիւնն իմանայ։

—Ի՞հ, Սօփօ ջան, բան չունես, որ այդպիսի բաներ ես խօսում։

—Հ՞ը, ինչ ես ասում, լայեղ չես անում թէ ինչ է։

—Լայաղութեան բան չէ, ինչու լայեղ չեմ անում, ուսում առած, խելօք տղայ է, բայց վարժապետութեամբ կարող է կին պահել։

—Աղջի, ինչի չի կարող պահել, ամսական հինգ թուման ռոճիկ ունի, իւր աշխարհքում տուն ունի, բաղ ունի, դինին գալիս է, խաղողը գալիս է, էլ ինչ ես ուզում, ջուխտ ոտքով բաղդաւորութեան մէջ ես ընկնում։

—Ի՞նչ պէտք է արժենայ դրա մուլքը։

—Ասում են հազար թուման արժէ։

—Չեմ իմանում ինչ պատասխան տամ քեզ Սօփո-ջան, ասաց Մարթան։

—Էլ ինչ պատասխան պէտք է տաս, վեր ջացած բան է, նա քեզանից ոչ փող է ուզում ոչ բաժինք, դատարկ աղջիկ էլ չեմ տալ։

—Դէ լաւ, թող քո խօսքն լինի, միայն խրատիր տղին, որ նշան բերի, ինձ հարևանների առաջ սևերես չանի։

—Շատ լաւ կը լինի, այս շաբաթ նշանը էքը կուտենք, իսկ միւս կիրակի հարսանիքը, ասաց Սօփոն և գնաց Միքայէլին ուրախացնելու, իսկ Մարթան մնաց մտածութեանց մէջ ընկղմուած։ Նրա միտն եկաւ Ղազախի Ս. դիպուածը, իւր դժբաղդ ամուսինը՝ դաբաղ Գևոն, ամենշաբաթներով տուն չէր գալիս և քնում էր գոմի ծարանի մէջ վախենալով իւր կնոջ պահանջներից, կռուից և ծեծից...

VII

Մի քանի օրից յետոյ կայացաւ Միքայէլի և Սօնայի նշանդրէքը և Միքայէլը համաձայն Մարթայի պատուէրին մի թանկագին նշան բերեց։

Այժմ հարկաւոր էր հարսանիքի պատրաստութիւն տեսնել։

—Որդի, հիմա դու իմն ես, ինձնից քեզ խրատ չի հասնի, բայց էլի քեզանից մեծ եմ հասակով, դու ինձ պէտք է լսես, այնպիսի բան պէտք է բռնես, որ դոստ ու դուշմանի չծիծաղեցնենք, ասում էր Մարթան։

—Դէ լաւ, ես համաձայն եմ. ինչպէս դու կը կարգադրես, այնպէս էլ հարսանիք կը սարքեմ, թէև ես ուզում էի շատ համեստ անցկացնել։

—Չէ, համեստ անցկացնել ինչպէս կարելի է, մի՞թէ ես իմ աղջկան այնպէս եմ պահել, որ հարսանիքը առանց սազանդարի ու առանց փայլի անցկացնեմ. չէ, փեսայ ջան, ինչ ուզում ես արա, փող մի խնայի, պարտք արա, բայց լաւ հարսանիք սարքիր, թող իմ դուշմանները ճաքեն, թէ չէ հօ դիտես, շատերը աչք ունէին իմ Սօնայի վրայ, բայց նրանց չտուի աղջկաս, իսկ

հիմա, որ հարսանիքը չքեղ չլինի, էլ բան չեն թողնի որ մեր գլխին չթափեն։

Թէև Մարթայի այդ խօսքերը լաւ տպաւորութիւն չարին Միքայէլի վրայ, բայց նա դրա խօսքիցը չդուրս եկաւ և մի չքեղ հարսանիք արաւ *)։

Այդ հարսանիքի արդիւնքը այն եղաւ, որ Միքայէլը երկու հարիւր մանէթ պարտքի տակ ընկաւ. բայց Միքայէլը բնաւ պարտքի մասին ուշք չէր դարձնում, նա գիտէր, որ ետեը տուն ու այգին կայ, նա միայն գոհ էր, որ իւր գլխումն ունէր իւր սրտի ուզած նազելի վարդը... Ու թռչում էին օրերը, ամիսներն ու տարիքը իրար ետևից...

---

*) Միքայէլի խաչեղբայրը համաքաղաքացի երիտասարդ Գ. Ս-ն էր, որը հարսանեաց ծախսերի մէջ իւր փողերը աւելի շռայլելով հանդիսին չքեղութիւն էր տալիս, մանաւանդ նորապսակների եկեղեցուց վերադառնալիս, երբ փակ կառքով դիմում էին Հալաբաբ դէպի Միքայէլի բնակարանը։

VIII

Միքայէլի և Սօնայի հարսանիքից անցել էր չորս տարի։

Հոկտեմբեր ամիսն էր։ Միքայէլը կանգնած էր պատուհանի առաջ և տխուր նայում էր դուրս։

Դուրսը մաղում էր բարակ անձրևը և կաթիլ առ կաթիլ դիպչում ապակիներին, բաղխում նրան և հոսում ցած։ Տխուր ու տրտում էր երկինքը, նա լալիս էր, նա արտասուում էր վհատ ու թախծալից կերպով և թախիծով լցնում Միքայէլի սիրտը։

Միքայէլը նայում էր անձրևի կաթիլներին և նրա հոգին լցուում էր դառնութեամբ, մինը միւսի ետևից, իրար յաջորդելով տխուր մտքերը անցնում էին նրա գլխի միջով և խռովեցնում նրա հոգին։

Միքայէլը մտածում էր. նա յիշում էր չորս տարի առաջ իւր ուրախ կեանքը, ուրախ և անվրդով ժամանակը և համեմատում էր իւր ներկայ դրութեան հետ. որքան տարբերութիւն։ Առաջ նա անհոգ և ուրախ էր, ոչինչ դարդ, ոչ մի վիշտ չէր խանգարում նրա ուրախ տրամադրութիւնը, իսկ այժմս օր աւուր, ժամ առ ժամ դարդուում էին իւր հոգսերը։

Առաջ նա ապրելու համար չէր էլ մտածում, իսկ այժմ գոյութեան կռիւը կեղեքում էր նրան, մաշում ու տանջում էր նրան...

Առաջ նա միայնակ էր, իւր չոր գլուխն էր ճանաչում, իսկ այժմ երեք հոգով էին, որոնց գոյութեան համար պէտք էր միայն ինքը հոգս քաշէր, իսկ այդ գոյութիւնը, այդ ապրուստը պէտք է լինէր ճոխ, շռայլ, ոչ մի բանով պակաս, այդ էին պահանջում իւր զոքանչը և իւր կինը, որին դեռ խելագարի պէս էր սիրում։

Սիրում էր կնոջը, բայց թէ ինչու համար, ինքն էլ չգիտէր. նա զգում էր, որ Սօնան կըրթութիւն չունի, նա տեսնում էր, որ իւր կինը չի կարողանում տանտիկնութիւն անել, այլ նրա ուշք ու միտքը միայն հագնելու, պարելու և ճոխ կեանք անցկացնելու վրայ է, և վերջապէս նա զգում էր, որ ինքը կրկին միայնակ է, կրկին չունի մի ընկեր, մի խորհրդատու, մի լծակից, որ իւր հետ քաշի ամուսնական ծանր լուծը...

Չնայած այդ հակասական պայմաններին, նա կրկին սիրում էր կնոջը և հլու ստրկի նման կատարում էր նրա ամեն մի քմահաճութիւնները, բայց թէ ուր կըտանէր դորան այդ ճանապարհը, Միքայէլը դրա վրայ ամենևին ուշք էլ չէր դարձնում, չէր էլ կարողանում մտածել. բայց զգում էր, որ այդ ճանապարհը լաւ տեղ չէր դուրս հանի և թէ վերջը տխուր կեանք է վարելու։

Նա իւր բաղդը յանձնել էր կեանքի հոսանքին, ուր որ կը հանէր նրան կը հանէր, նա պատասխանատու չէր ապագային։

Օ՜... ինչ քաղցր կը լինի կեանքը, երբ մարդու հետ միասին հաւասարապէս լուծ կը քաշի կինը, երբ նա կը խնայէ իւր մարդու կոպէկները, կը յարմարուի մարդու դրութեան հետ և ըստ այնմ կը կառավարէ տունը։ Բայց վա՜յ է այն զոյգին, երբ կինը չի հասկանում մարդու դրութիւնը և միայն իւր զարդարանքների, իւր գոյութեան կռիւն է մղում մարդու հետ, ամեն օր թիւնաւորելով նրա կեանքը և միմիայն իրանը պահանջելով։ Այն ժամանակ կորաւ ընտանեկան խաղաղութիւնը, փչացաւ սուրբ ամուսնութիւնը...

Միքայէլին իւր ուսուցչական ռոճիկը չէր բաւականացնում. նա արդէն ծախել էր իւր այգին չնչին գումարով, որի մի մասը պարտքերի էր տուել, իսկ մի մասը միայն պինդ ձեռքերով էր բռնել. նա խնայում էր այդ փոքրիկ գումարը. կինը յղի էր, շուտով մի անդամ էլ պիտի աւելանար իւր ընտանիքին. ուստի նա գիտէր որ մեծամեծ ծախսերի դուռը պիտի բացուէր իրան համար։

Տխուր նայում էր նա դուրս, երբ ներս մտաւ Սօնան։

—Միքա՜յէլ, ասաց նա ցած ձայնով։

Միքայէլը սթափուեց և յետ նայեց։

—Ի՞նչ է, հոգիս, ասաց նա տեսնելով կնոջ ուրախ ժպիտը։

—Կերթաս քարվանսարա և այս կտորից քսան արշին կառնես, ասաց Սօնան և տուեց կերպասի մի նմուշ։

Միքայէլը անդիտակցօրէն առաւ կնոջ ձեռքից նմուշը և խելացնորի նման նայեց. նա զգաց որ նոր ծախքի տակ պիտի ընկնի։

—Ի՞նչի համար է և ո՞ւմ համար։

—Քեզ ինչ ինչի համար է կամ ո՞ւմ համար, տղամարդու ինչ գործն է կանացի գործին խառնուելու։

Միքայէլը յօնքերը կիտեց, մինչև հիմա լուռ կատարել էր իւր կնոջ պատուէրները, բայց այժմս ուզեցաւ բողոքել. նա զգաց, որ դրա գնելիւր միջոցներից դուրս է և թէ առանց դրա էլ շատ կտորներ է գնել։

—Չէ, Սօնա ջան, պէտք է ասես ինչի համար է և եթէ սաստիկ կարևոր չէ, չառնել. գիտես ես այնքան փող էլ չունիմ։

—Ինչեր ես ասում, այդ էր մնացել, որ ես քեզանից լսէի, քեզ ասում եմ որ հարկաւոր է ինչ մի մեծ զումարի է որ...

—Ախր չէ՞ որ քանի քանի տեսակ դերիացուներ ունիս, էլ սա ինչու համար է, աւելորդ չէ՞. քարվանսարաներ հօ չունիմ,—կէս վրդովա պատասխանեց Միքայէլը։

—Ի՞նչ ես ասում, Միքայէլ, բաս ամօթ չէ

որ մայրս առանց ձմեռուայ դերիայի մանգաղ կամ իմ նամուսը կը վերցնի, որ նա ձմեռուայ դերիա չունենայ։

—Չէ՞ որ նրա համար առայ։

—Նա հին է, նրա մօդան գնաց։

—Չէ, Սօնա ջան, ես մօդնի մարդ չեմ։

—Դու չես, բայց ես մօդային հետևում եմ։

—Ի՞նչ անեմ թէ հետևում ես, մի այգի ունէի, այն էլ ծախեցի ու կերանք, ես էլ միջոց չունիմ, ուստի չեմ կարող այդ դերիացուն առնել։

—Բաս ես էլ ինչացու եմ աշխարհիս երեսին, ուրեմն դու ինձ չես սիրում, ինձ ուզում ես սպանել, հիւանդացնել, ճլէրը դցել հա .. ասաց Սօնան և նրա աչքերը արտասուքներով լցուեցան, նա հանեց թաշկինակը և սրբեց արտասուքները։

Միքայէլը նայեց նրան և նրա սիրտը ճմլուեցաւ, բայց թէ տեղից չշարժուեցաւ։

—Ուրեմն չես ուզում առնել հա, կրկնեց Սօնան։

—Չէ, կարճ կտրեց Միքայէլը։

—Այդպէս հա, այսպէս ես սիրում ինձ, ասաց Սօնան և սկսեց հեկեկալ փոքրիկ երեխայի նման։

Կեղծ էր այդ հեկեկոցը թէ իսկական, չգիտեմ, միայն նա Միքայէլի դամբը (երակը) տել էր։ Այդ հեկեկոցի վրայ Միքայէլը փափ-

կեց և ինչ որ փնթփնթաց և մտենալով կնոջը ասաց.

—Լաւ, լաւ, մի լաց լինի, աշխարհ մի գցի, լսողը կը կարծի թէ ես քեզ ուրիշ բանի վրայ եմ տանջում. կերթամ, կառնեմ, վերջին կոպէկս էլ կը ծախսեմ, արիւն քրտինքով կաշխատեմ, կոպէկ կոպէկի վրայ կը դնեմ, ես սոված քաղցած կը ման գամ և ձեզ ձեր հաճոյից համաձայն կը հագցնեմ և կը պահեմ, միայն թէ աշխարհ մի ձգէք, աղմուկ մի անէք, հո գիտէք, որ ես իմ նամուսի գերի եմ, շուաքիցս էլ եմ ամաչում, ասաց Միքայէլը և դառնացած սրտով դուրս գնաց դերիացուն գնելու։

IX

Միքայէլը դուրս գնաց թէ չէ Սօնան վեր թռաւ տեղից և լի կրծքով հռհռաց։

Այդ միջոցին ներս մտաւ տիկին Մարթան, որ դռան ետևից լսում էր Սօնայի և Միքայէլի խօսակցութիւնը։

—Տեսար, մայրիկ, ինչ օյին հանեցի նրա գլուխը, ասաց Սօնան դիմելով մօրը։

—Աչքն էլ հանեցիր. դա միշտ ասում է փող չունեմ, փող չունեմ, բայց գտնւում է, ջանը դուրս գայ աշխատի և առնի, բաս էլ ինչի տղամարդ է, որ փող չկարողանայ աշխատել։

—Բանն էլ այդ է է...

—Չէ, Սօնա-ջան. ինձանից խրատ վերցրու, որ ամենևին չփափկես, դրա սանձը ձեռքիցդ չթողնես, թէ չէ եթէ թողիր, վայն եկել է մեզ տարել։

Ինչքան կարող ես բղաւի վրան, լաց եղիր, աչքերդ վրան ոլորիր, որ նա քեզանից վախենայ, թէ ես ու դու որ չլինենք, շատ հարկաւոր է թէ ինքը գլուխը քարով էլ կը տայ։ Ի՞նչի համար ենք ապրում այս աշխարհում, եթէ լաւ չենք հագնի և մաշի. խեղճ կեանքը ինչիս է հարկաւոր, հերիք չէ՞ ինչքան խեղճութիւն քաշեցինք... Եթէ չէր կարողանում կին պահել, էլ

ինչի համար պսակուեցաւ... չէր իմանում որ կնիկը պահել կուզէ՞...

—Է՞է, ասում է էլի, թող ինչքան ուզում է խօսի, ինչքան ուզում է ոտները թափէ թափ տայ, ես իմը կանեմ։

—Ի հարկէ որ արա, ումից ես պակաս, զեղեցկութիւնդ է պակաս թէ չէնք ու շնորհքդ։

—Թող մի այդ դերիացուն բերի, յետոյ ուրիշ բան էլ պէտք է ուզեմ։

—Ի հարկէ, ես դեռ ձմեռուայ շուբա չունիմ, այսպէս հօ չեմ ման գայ, ջանը դուրս գայ մի շուբա էլ առնի, տաս թումանը հօ մեծ փող չէ։

—Ես զարմանում եմ թէ այդու փողերն ինչ արաւ, հէնց ասում է չունիմ, չունիմ։

—Աղջի, դու թոյլ ես, թոյլ, կնիկարմատը պէտք է մարդու ջանը մտնի ու բոլոր փողերը առնի. ձեռքին փող մի թողնի ու յետոյ դու ինչ ուզում ես առ, էլ նորա երեսին ինչի ես նայում։

—Հա, այդպէս պէտք է անել, լաւ ես ասում։

—Ի հարկէ, որ լաւ եմ ասում, ինքը հօ մարդ չէ, տղամարդու շնորհք չունի, մունջ գառան նման որ կողմը կը քաշես, այն կողմը կերթայ։

—Դա որ տղամարդ լինի քեզ այդպէս կը պահի, կը թողնի որ տխրես. վշտանաս... չէ, ես շատ սխալուեցայ, շատ. ես կարծում էի թէ ուսում առած տղայ է, կնիկ ուզելով աւելի խելքի կը գայ, աւելի կաշխատի, քեզ ամեն օր թէատր ու կլուբ կը տանէ, բայց ես իմ հաշուում շատ սխալուեցայ. էհ, երևի մեր ճակատին էլ այս էր գրած... անիծուի մեր բաղդը, աչքերս դուրս է գալիս, ջզրու ճիճինի եմ գալիս, երբոր տեսնում եմ Կարապետի աղջկան աւելի զուգած ու աւելի լաւ ապրելիս։

—Է՞հ, ինչ անենք մայրիկ, նրա աղջիկը շատ բաներ էլ է անում, ինչ օյիններ ասես հանում է մարդու գլխին, ես էլ հօ չեմ կարող անել։

—Ի՞նչի չես կարող. աչքն էլ է հանում, որ անում է, նա իրանը հօ գրստում է, ջհանդամը հարևանների գլուխը, ինչ ուզում են թող խօսեն. թէ խօսում են Կարապետի աղջկայ վրայ, ես գիտեմ շատ այնումն է գցում այ, ջզրու աւելի լաւ է հագնում ու մաշում, և շատ խելօքութիւն էլ է անում, մարդ քանի կեանք ունի պէտք է լաւ ապրի, թէ չէ շատ հարկաւոր է թէ մեռնելուց յետոյ ոչ ոք ողորմի չի տայ...

X

Չա՛, մայրիկ ջան, ճիշտ է՞, որ Նուշկէն մարդաթող է եղել։

—Ի հարկէ, որ ճիշտ է, այս բոպէին էլ իր սիրեկանի մօտ է ապրում, իսկ մարդն էլ ուրիշ սիրուհի է պահում։

—Համա թէ փչացել է աշխարհը։

—Աշխարհը չէ փչացել, այլ մարդիկն են փչացել, որ այդպէս իրանց կանանց ուշք չեն դարձնում, քաղցած ու տկլոր պահում են ու նրանք էլ ճարը կտրած սիրեկաններ են պահում. բաս ինչ անեն խեղճերը. տկլոր ու քաղցած հօ չեն մնալ։ Ո՞վ է ուզում, որ իւր անունը կոտրի, ոչ ոք չէ ուզում, բայց այն օրերն են ցոյց տալիս, որ նրանք նամուսն ու ամօթը մէկ կողմը դրած այդ տեսակ բաներ են անում և ես դրանց չեմ էլ մեղադրում. մէկը դու լինես, եթէ քո մարդը քեզ չկարողանայ պահել, դու քաղցած ու ծարաւ կարող ես մնալ, չէ՞ որ հագնել կուզես, ուտել կուզես, առանց դրանց հօ մարդ չի կարող մնալ. ջուրը ընկածի ձեռքը ինչ որ ընկնի նրանից էլ պինդ կը բռնի։

—Ուզիր ես ասում, ինչ ասեմ, մայրիկ, ահա իմ մարդը քեզ օրինակ, ջանը դուրս գալով

է մի բան առնում, կարծես մսիցը լինի կտրելիս։

—Ի՜հ, Աստուած մեր բաղդը անիծել է, աղջիկս, ինչ ասեմ, գլուխս որ քարովը տամ։

XI

Մի տարի էլ անցաւ. Աստուած Միքայէլին մի զաւակ պարգևեց, բայց ինչ մնաց կարմրաթուշ քաջառողջ երիտասարդ Միքայէլից. կորաւ նրա դէմքի փայլը, աչքերի զուարթութիւնը։ Նրա այտերը դուրս թափուեցան, աչքերը ընկան խոր ակնակապիճների մէջ և մեռելային դեղնութիւնը պատեց նրա երեսին։ Խորին թախիծը դրոշմել էր իւր աւերիչ կնիքը նրա երեսին և հետզհետէ աւերում էր այն դծերը, որոնք վաղեմի դեղեցկութեան էին պատկանում։ Կանանք մաշող հոգսերը Միքայէլին այդ օրին էին հասցրել, ընտա-

նեկան կեանքը ինչպէս ասում են նրան վրայ չեկաւ և նա հետզհետէ ընկնում էր մելամաղձային դրութեան մէջ։ Հոգսերը կուտակւում էին մինը միւսի վրայ և նա մի գերբնական ճիգ էր թափում հայթայթելու իւր ընտանիքի ապրուստը։ Ուսուցչական ռոճկով չբաւականանալով, նա դասերով էր պարապում, արտագրութիւններով էր զբաղւում, իւր կեանքն էր մաշում, միայն թէ գոհացնէր իւր կնոջն ու զոքանչին, բայց նրանք կրկին դժգոհ էին իրենից։ Ո՞ր ջուրն ընկնէր. մի կողմից իւր պատիւը, ամօթը չէին թողնում սահմանափակելու ծախքերը, իսկ միւս կողմից պահանջմունքն անվերջանալի ու անհատնելի էր։ Ի՞նչ անէր, ո՞ւմ դիմէր, որին յայտնէր իւր վիշտը, ո՞վ կը գտնուէր իրան կարեկից, ո՞վ կը սփոփէր իւր դարդը, մի դարդ, որ կեղեքում էր իրան։ Օ՜.. նա ամաչում էր մինչև անգամ ոտքը գետնին ամուր խփելու. վախենալով, որ մարդ կիմանայ և ինքը ծաղրի առարկայ կը դառնայ, աշխարհ կիմանայ, էլ ինչպէս կարող էր իւր կնոջ և զոքանչի հրամանները չկատարել։ Նա դիտէր, որ մի փոքրիկ պատճառ և ահա նրանք ոտնատակ կը տան իւր պատիւը, այն պատիւը, որ սրբութեամբ պահել էր մինչև օրս... Ո՜հ, եթէ կարողանար նա անձնասպանութիւն անել, այդ իւր ամեն վշտերին վերջ կը դնէր. . Նա կին ուզեց, որին սիրում էր և պիտի սիրէր յաւիտեան, բայց այդ սէրը հետզհետէ

սառաւ, հետզհետէ ատելութիւն դարձաւ.. Նա երազում էր ընտանեկան սուրբ և խաղաղ կեանք, իսկ այդ ընտանիքը հետզհետէ դժոխքի էր փոխարինւում... Մի որդի ունէր միայն և իւր սէրը, իւր ամբողջ էութիւնը նրա մէջ էր ամփոփել, նրա կեանքի թելը միայն նա էր բռնել, նրանով էր ապրում, նրանով էր քաշքշում իւր տանջալից կեանքը, չլինէր դա, այն ժամանակ էլ չէր ուզի շնչել թիւնալից այն օդը, որով շրջապատուած էր իւր տունը... Համարեա ամեն օր վրդովւում էր Միքայէլը, ամեն օր նոր նոր պահանջմունքներ էին յարուցանում, նոր դժգոհութիւններ առաջ բերում իւր կինը և զոքանչը, իսկ Միքայէլը որքան աշխատում էր հեռու փախչել, տան մէջ խաղաղութիւն պահպանել, այնքան նրան այդ չէր աջողում։ Միքայէլը տեսնում էր, որ իւր կինը ամենևին մեղ չունի և թէ Սօնային դրդողը իւր մայրն է, որի հրամանները կատարում է Սօնան և թիւնաւորում Միքայէլի հանգստութիւնը։ Միքայէլը համոզուած էր, որ եթէ չլինէր զոքանչը, եթէ չլինէր այդ չարասիրտ, անգութ կինը, այն ժամանակ իւր տան մէջ խաղաղութիւն կը տիրէր։ Սօնան մի զէնք էր, գործիք էր իւր մօր ձեռքին, որ գործ էր ածում այնպէս, ինչպէս իւր սիրտն էր ուզում. իսկ Միքայէլն անզօր էր դրան դիմադրելու, նա կամքի հաստատութիւն չունէր վճռական մի միջոցի դիմելու. այն ինչ երկպառակութիւնը հե-

տզհետէ սաստկանում էր նրանց մէջ և վաղ թէ ուշ մի բանով պիտի վերջանար այդ անհամութիւնը։

Ամեն մի չնչին բանի համար մայր ու աղջիկ խռովում էին Միքայէլից և շարաթներով չէին ցոյց տալիս մինչև անգամ իւր մանկանը, որի համար ապրում էր նա. բայց Միքայէլը տանում էր լռութեամբ այդ բաները, ամեն զրկանք, ամեն անպատուութիւն, ամեն նեղութիւն, հայհոյանք, անէծք տանում էր նա իւր յարկի տակ լոկ ամօթը աչքի առաջ ունենալով, որ այդ բանը թող դուրսը, մարդիկ չիմանան, իսկ ինքը պատրաստ էր իւր կնոջ և զոքանչի ամեն անպատուութեան դիմանալ։ Խեղջ մարդ, նա կարծում էր որ եթէ ինքը լռի, ամեն բան թաղնուած կըմնայ և իւր տան միջի տարաձայնութիւնը ոչ ոք չի իմանայ. նա չգիտէր, որ այդ գաղտնիքները մայր ու աղջիկ արդէն աշխարհ էին փռել և թէ ամէնքը արդէն գիտէին այդ. բայց նա ապահով էր կարծում իրան այդ բանից, որովհետև իւր ականջին դեռ օտարից ոչինչ չէր հասել...

XII

Տիկին Մարթան այսօր սաստիկ վատ տրամադրութեան տակ էր. նա բարկացած էր իւր փեսայի վրայ, որովհետև փեսան չէր գնել իւր ցանկացած իրը։ Նրա գործը չէր, թէ փեսան փող ունէր թէ չունէր, բայց նա պահանջում էր այդ, թէև համոզուած էր, որ իւր փեսան բոլորովին դատարկուել է և թէ այլ ևս միջոցներ չունի։ Վշտացած նա շրջում էր սենեակում և իւր գլխում հրէշաւոր ծրագիրներ կազմում։ Նա դժգոհ էր իւր վիճակից, սաստիկ դժգոհ։ Ուզում էր ապրել, ուզում էր ճոխ հագնուել, ուրախ ժամանակ անց կացնել—իսկ դրա համար միջոցներ չկար, փող չկար։ Փեսան արդէն չունի, նա չի կարողանում յագեցնել իւր ցանկութիւնները։ Բարկութեամբ նա կրճատցնում էր ատամները և նրա խորշոմներով լցուած դէմքի վրայ երբեմն երբեմն անցնում էին արեան ալիքներ, որոնք մերթ գունատւում, մերթ կարմրում էին. նրա աչքերը բարկութիւնից դուրս էին թափւում, նա միջոցներ էր որոնում ղուշմանին ճաքեցնելու, իսկ այդ միջոցները չկային։ Ի՞նչ անէր նա, որին դիմէր, ինչպէս ձեռք բերէր այդ մետաղը, որով յագուրդ տար իւր անյագ ցանկութիւններին։

—Օ՜... անիծուի այս տեսակ բաղդը, անիծուի և անիծուի, ասում էր նա ինքն իրան, մարդ փեսայ ունենայ, պսակած աղջիկ ունենայ և պակասութեան մէջ ապրի... ա՜խ, Աստուած, եթէ այս բոպէիս ճանկս ընկնես, ես գիտեմ քեզ ինչ կանեմ... և նա բարկացած սպառնալիքներ էր ուղղում դէպի Ամենաբարձրեալը, Որի անունը տալով պիտի սոսկար նա։

Ներս մտաւ Սօնան. մայրը իսկոյն իւր դէմքի արտայայտութիւնը փոխեց, նրա գլխում արդէն պատրաստ էր մի ծրագիր, որին հասնելու համար չէր խնայիլ ոչ մի միջոց։

—Հ՜ը, գնացիր դերձակի մօտ. պա՞տրաստ էր քո նոր զգեստդ։

—Գնացի մայրիկ։

—Ցետոյ։

—Էլ ինչ յետոյ, պատրաստ է, միայն փող չկայ, որ տամ և առնեմ զգեստը։

—Փող չկա՞յ... Է՜ լաւ, մի քանի օր համբերենք, ինչ անենք։

—Ես համբերելու ոյժ չունիմ, մայրիկ. այնպէս սաղ է գալիս այդ զգեստը ինձ, որ կարծես իսկը թագուհի լինեմ։

—Դու առանց այդ զգեստի էլ թագուհի ես, աղջիկս, աւելացրեց Մարթան և մի խոր հոգոց քաշեց։

Այդ միջոցին լսուեցաւ կառքի ձայն, որ կանգ առաւ իրանց տան առաջ. մայր ու աղջիկ

հետաքրքրութիւնից դուրս նայեցին։ Ֆայտոնից իջաւ մի կարճահասակ նիհար և տգեղ դէմքով, մօտ 35 տարեկան մի մարդ, որ խորհրդաւոր կերպով նայեց դէպի Սօնան և ապա վճարելով կառապանին, շտապով մտաւ իւր տուն, որ գրտնվում էր Միքայէլի տան դիմաց։

—Հ՜ը, ինչ շատ է նայում քեզ, դո՞ւր հո չե՞ս եկել, ասաց Մարթան դիմելով աղջկան։

—Ի՜հ, հոգեմ դրա մասխարա գլուխը, աւելացրեց Սօնան։

—Ինչի՞ ես հոգում, աղջի, ինչն է պակաս, լաւ սովդագար մարդ ու լաւ կարողութեան տէր է։

—Հա, դրա մասին խօսք չունեմ, բայց ինը ինչին է նման, կարծես իսկը սապատաւոր կապիկ լինի։

—Ես գիտեմ չէիր ուզի որ քո մարդը դրա կարողութիւնն ունենար ու թէկուզ սատանի դէմք էլ ունենար ա՞յ։

—Չէ, մայրիկ, ես դրա կարողութիւնը կուզէի, բայց դէմքը ոչ, ասաց ծիծաղելով Սօնան։

—Սարսա՞ղ, ես ընդհակառակը ուշք չէի դարձնի Փանոս աղայի դէմքին և կարողութիւնը կը զաւթէի։

XIII

Վայ է, երբ հաստատամտ բոյսը՝ հողումը չէ աճել, երբ նա չունի ամրակազմ բուն, որ կարողանայ ամեն արդելքների դիմանալ։ Ի՞նչ պիտի անի գառան անմեղութիւնը, աղաւնու միամտութիւնը ժանտ օձի խորամանկութեան դէմ, ինչպէս կը դիմանայ ճկուն ճիւղը, քնքուշ ծաղիկը կամ թեթև նորաբոյս թուփը մրրկի ուժեղ հոսանքին, երբ նա փչում է շառաչելով, երբ նա շնչում է իւր թիւնաւոր շնչով, երբեմն երգելով, երբեմն գուրգուրելով, շոյելով, քնքուշ տերևիկներին մեղմ տատանելով, երբեմն սուլելով. իսկ երբեմն կատաղելով և ահարկու շռընչալով։

Վայ է, երբ նա շոյում է, գուրգուրում է և իւր թիւնաւոր լեզուով լիզում է նրանց, այն ժամանակ կորան նրանք, վերջնական մի ուժգին հողմ էլ և ամեն ինչ պրծաւ. վախ չկայ, երբ բուռն փոթորիկը յանկարծ է փչում, հեռուից արդէն իւր գալը գուժելով, այն ժամանակ թոյլ եղեգն էլ կը պաշտպանուի ուժեղի տակ և քամու հոսանքը կանցնի անհետք, չի երևայ որտեղից նա եկաւ և թէ ուր գնաց նա։

Կեանքն էլ է այդպէս. երբ մարդուս բնաւորութիւնն է յողդողդ, երբ չկայ կամք, չկայ

հաստատուն բնաւորութիւն, երբ չկայ իսկական սէր, այն ժամանակ անբարոյականութեան թոյնը հեշտ ծաւալ է գտնում նրա սրտի մէջ, կորչում է կեանքը, փչանում երջանկութիւնը...

Ի՞նչ ոյժ ունի նորաբոյս ծաղիկը կամ նոր բացուած կոկոնը և կամ ինչ տեղեկութիւն ունի աշխարհիս լաւ և վատ կողմերի վրայ նորապսակ աղջիկը, հաստատուն ինչ կամք, որոշ ինչ կարծիքներ կարելի է նրանից պահանջել։

Սօնան մի անփորձ աղջիկ էր, որ կուրօրէն հաւատում էր մօրը, իսկ մայրը—փորձուած սատանայ։ Մարթան ձարձրացել էր արդէն փեսից և թոյներ էր թափում նրա կեանքի մէջ, էլ չէր ուզում նա այդ կեանքը և Մարթան միանգամից էր ուզում ազատուել իւր փեսից։ Ցարմար առիթ էր փնտռում դրանից ազատուելու և այդ առիթը չուշացաւ գալու։

Փանոս աղան, որ ինքը մի զոկ սնանկացած վաճառական էր, ահագին կարողութիւն ունէր։ Սօնայի գեղեցիկ դէմքը բոյին ու բուսաթը սաստիկ դուր էր եկել ամուրի Փանոս աղային, որ ամէն միջոց գործ էր դնում նրա հետ ծանօթանալու և իւր խանդոտ սէրը արտայայտելու։

Եւ ահա՛ Փանոս աղան լսելով Միքայէլի գործերի անյաջողութիւնը, զոքանչի և փեսայի տարաձայնութիւնները և այդ հանգամանքից օգտուելով, սիրտ արաւ և մի օդային համբոյր ու-

դարկեց Սօնային, որ կարմրատակելով ներս ընկաւ տուն և յայտնեց այդ բանը մօրը։

Մարթան աչքերը չռեց, նրա սիրտը արագ սկսեց տրոփտրոփել։

—Յետոյ, դու ինչ արիր։

—Ես փախայ, մայրիկ։

—Սարսաղ, ինչու փախար, դու էլ մի օդային համբոյր կուղարկէիր, ինչդ կը պակասէր որ...

—Յետոյ ամօթ չէր։

—Ի՜հ, բան չունիս, հարուստ մարդ է, դրանով սիրտը կը շահէիր և նա քեզ համար ընծաներ կուղարկէր։

—Առանց այդ ի հարկէ որ չի լինի, ասաց Սօնան փոքր ինչ մտածելուց յետոյ, և երբ երկրորդ անգամ Փանոս աղան օդային համբոյր ուղարկեց, այն ժամանակ Սօնան ժպիտը երեսին փոխադարձապէս դարձրեց նրան այդ համբոյրը։ Հետևանքն այն եղաւ, որ նրանք ծանօթացան իրար հետ և որպէս զի աւելի ամուր լինի նրանց ծանօթութիւնը և օտարների աչքին ոչինչ չերևայ, Փանոս աղային երեխայի կնքահայր դարձրին, որից յետոյ. ընծաների դուռը բացուեցաւ։ Անբարոյականութեան թոյնը արդէն թափուած էր։ Մարթան գտել էր միջոց ապրելու...

XIV

Ո՞ւր է դժոխքը. մի՞թէ սրանից աւելի ահարկու և սոսկալի տանջանք կայ, որով ես տանջւում եմ, թէ սրանից աւելի վատթարը կայ։ Ի՞նչ է գեհենի կրակը իմ սրտիս կրակի հետ համեմատած, ոչինչ, իմ սիրտս այրւում է, լափւում է զարհուրելի, այլանդակ կենդանիներից, նա քրքրւում է, նորից գործում, ասեղներով կարւում, կտոր-կտոր լինում, եռացրած ջրով դաղւում և զոլորշիանում, սրտիս այդ զոլորշին ուզում է դուրս ժայթքել կրծքիցս, թոքերս փքւում են, կարծես ուռչում, ես կորցնում եմ խելքս, արդէն մօտ եմ ցնորուելու... Ո՜հ, Աստուած իմ, Աստուած, այս ինչ օրի հասայ, իմ հարազատ կինը, իմ աչքի լոյս Սօնան, որի համար կեանքս չխնայեցի, թողնում է ինձ, բաժանւում է ինձանից, օգտուելով իմ անյաջող հանգամանքներից և գնում է գրկելու Փանոս աղային, այդ անառակ մարդուն, այդ ստոր, սրիկայ և խարեբայ մարդուն... Ո՜հ ինչ անբարոյականութիւն, ինչ սոսկալի և քստմնելի յանցանք, բայց մի՞թէ ես այդ կը տանեմ, մի՞թէ... Ոչ, սուտ է, սուտ են այդ բաները, ինձ չվոթեցրին ընկերներս, ինձ վրայ ուզեցին ծաղրել, վրաս ծիծաղել, ո՜հ, զազրելի. ստախօս մար-

դիկ, դուք պատասխան կը տաք ինձ, եթէ սուտ դուրս եկաւ ձեր ստոր բամբասանքը... ոչ, այդպիսի բան չկայ, իմ կինը թէ և դժգոհ է ինձնից, բայց ընդունակ չէ այդ բանն անելու... դուք սուտ էք ասում, դուք զրպարտում էք, նա անմեղ է, այդպէս ասում էր Միքայէլը և շփոթուած սպասում իւր կնոջը։ Ընկերները նրան լուր էին բերել, որ իւր կինը մտերմացել է Փանոս աղայի հետ և թէ Փանոս աղան ամեն կերպ աշխատում է Սօնային իրենից խլելու, որին աջակցում է նաև տիկին Մարթան։ Բայց կինը տանը չէր, այն ինչ Միքայէլը անհամբեր սպասում էր կնոջ վերադարձին. նա ուզում էր դէմ առ դէմ խօսել, ամեն բան իմանալ։ Նա ուզում էր կամ փարատել իւր կասկածանքը և կամ տեղնուտեղը հանգչիլ, փչանալ, ջնջուել աշխարհիս երեսից։

Ժամանակը թռչում էր արագ, իսկ Սօնան չկար, բայց թէ ուր էր նա, այդ յայտնի չէր Միքայէլին—Իսկ Միքայէլը սպասում է, սպասում է ու խոր հառաչում. վայրկեանները, րոպէները շատ դանդաղ, շատ կամաց են առաջ տանում և ամեն մի րոպէն, ամեն մի վայրկեանը Միքայէլի հոգու վրայ թողնում է իւր հետքը, այդ հետքը սոսկալի է, նա չի երևում բայց սարսափելի կերպիւ տանջում է նրան. արդէն նրա մազերը քըստմնած են, աչքերը կատաղի և դուրս թափուած, երեսը այլանդակ... Նա

սպասում է, ատամները կրճտացնում և ամբողջ մարմնով դողում. նրա գլխի մէջ կայծակի արագութեամբ թռչում են զանազան մտքեր, մէկը միւսից անմխիթար, մէկը միւսից սարսափեցնող...

—Բայց ուր է նա, արդէն դիշեր է և նա չէ երևում. առաջ նա այդպէս չէր անում, դիշերները միշտ տանն էր, իսկ հիմա չկայ...

Զլինի թէ յիրաւի, այս բոպէիս, երբ ես սոսկալի կերպիւ տանջւում եմ, նա համբուրւում է Փանոս աղայի հետ, նա զուարճանում է նրա հետ։

Օ՜... ոչ, ոչ և ոչ, ես չեմ հաւատում, այդ անկարելի է... Իսկ եթէ ճիշտ լինի. իսկ եթէ խաբած չլինին ինձ ընկերները... և ինչու պէտք է խաբէին նրանք ինձ, օ... այն ժամանակ լուիր դու, իմ սիրտ, այն ժամանակ ամեն ինչ վերջ կը դնուի և իմ կեանքն էլ գոյութիւն չի ունենայ այս փչալից աշխարհում... բայց չկայ նա, ուշանում է, ուր գնամ ես, որտեղ փնտռեմ, որ անկիւնում կը գտնեմ նրանց, ուր է Փանոս աղան, որ գողանում է իմ ընտանեկան սրբութիւնը և խանգարում խաղաղութիւնը, ուր է նա... Ո՞վ տուեց նրան այդ իրաւունքը, ով դրդեց... ո՜հ, Աստուած իմ, Աստուած, բայց մի՞թէ դրանք զգում են թէ ինչպէս վիրաւորում են ինձպէսներին, թէ ինչպէս մենք տանջւում ենք... Չէ, դրանք զգացմունք չունին, ամեն բան, ամեն

ստոր քայլ անում են լոկ իրանց գազանային ցանկութիւնները կատարելու...

Սպասեց Միքայէլը, սպասեց, կատաղած շրջեց իւր սենեակում և ապա յոգնած ընկաւ մահճակալի վրայ։

Դիշերուայ ժամի մէկն էր և դեռ կինը չկար, իսկ յոգնածութիւնը, վիշտը, հոգեկան տանջանքը թմրեցրին Միքայէլին ու նա հետզհետէ մոռանալով աշխարհային վշտերն ու հոգսերը ընկաւ Մորփէոսի գիրկը, բայց այդ երկար չտևեց։ Ցանջուած, դառնացած հոգին հանգստութիւն էր ուզում ու նա զգաց իրեն կանաչ մարգագետնի վրայ, ուր անխռով շրջում էր նա միայնակ, այնպէս սիրուն, այնպէս անուշ բուրմունք կար այնտեղ, որ կարծես եդեմի անմահ ծաղկանց բուրմունք լինէր։ Նա լի կրծքով շնչում էր այդ անուշահոտութիւնը, նրա գլուխը պտտւում էր այդ բուրմունքից, բայց կրկին աչքածակի նման ուզում էր միանգամից շնչել, միանգամից արբենալ։ Ո՜հ, նա ծարաւի էր խաղաղ կեանքի, հանգիստ ապրելու, նա ձանձրացել էր հոգսերից ու վշտերից, իսկ այդտեղ, այդ եդեմի նման մարգագետնում ոչ մի բան չէր վրդովեցնում իրան, ոչ մի հոգս չէր խանգարում իւր սրտի խաղաղութիւնը։

Գոհունակութեամբ լի աչքերը վեր ուղղեց դէպի երկնային Պետը և այնտեղ՝ անհուն եթերի մէջ տեսաւ բիւրաւոր փիրուզի նման փայլող

աստղեր։ Ինչքան սիրուն, ինչքան անոյշ էր նրանց փայլը... ու նրա հոգին սկսեց սաւառնել եթերային այդ կապտութեան մէջ, ուր նրա մտքին անիմանալի մարմինները այնպէս սիրուն զարդարել էին երկնակամարը։ Ո՜հ, ինչ չնչին ենք մենք, ինչքան ստոր արարածներ ենք մենք, Տէր, որ Քո սիրուն աշխարհը դժոխքի ենք փոխարինում, մտածում էր նա ու շլացած աչքերով դիտում վերին աշխարհը։ Ցանկարծ իւր մօտից մի ինչ որ խշխշոց լսուեցաւ, Միքայէլը դողաց ամբողջ մարմնով և նա յետ նայեց, նա տեսաւ որ ինքը կանգնած է մի վհի առաջ, որի միջից բարձրանում էր մի օձ և ուղղակի դէպի ինքն էր գալիս. նա արդէն հանել էր իւր երկճիւղ լեզուն և արդէն մօտ էր խածելու. սառը քրտինքը պատեց Միքայէլին, նա վերջին ճիգը թափեց և աղաղակեց...

Միքայէլը իւր աղաղակից զարթնեց. նա զգաց, որ երազի մէջ էր և այն էլ սոսկալի։ Փոթորիկը մօտենում էր։ Նա վեր կացաւ, մօտեցաւ կնոջ սենեակին։ Կինը և զոքանչը, ինչպէս երևում է, նոր էին վերադարձել և պատրաստւում էին քնելու. նա թողեց նրանց հանգիստ և մինչև առաւօտ յետաձգեց իւր մտադրութեան իրագործելը։

(Գոհարսդար) Կոմիտաս

XV

Առաւօտը լուսացաւ։ Պայծառ ու սիրուն առաւօտ էր այդ։ Ճնճղուկները ուրախակրկչում էին, իրենց երգը ծլվլում, մի ծառից միւսը թռչում, մի տանիքից միւսը անցնում, ապա ցած՝ դէպի գետին, ցորենի կամ գարու հատիկը կլանում, կրկին թռչում վեր և նոր որս փնտռում։ Ուրախ էր աշխարհը, սքանչելի էր նա, արևը կեանք ու շարժողութիւն էր ուղարկում աշխարհին, նա ժպտում էր, այն ինչ Միքայէլի հոգու մէջ տիրում էր սարսափելի խառնափնթորութիւն։ Նրա համար չէր ճնճղուկների ուրախ ճռւողումը, նա տխուր էր և չփոթուած, ամբողջ մարմնով դողում էր և դեռ երկար ժամանակ սիրտ չէր անում իւր կնոջ սենեակը մտնել. բոպէներն անցնում էին արագ, իսկ նա մերթ մօտենում էր նրա սենեակին, մերթ յետ դառնում։ Մի շաբաթ էր ինչ որ խռով էր նրա կինը, մի շաբաթ էր ինչ նա չէր տեսել թէ իւր կնոջը և թէ որդուն, որին հոգու չափ էր սիրում, և որի տեսնելը արգելել էր Սօնան։ Ծանր էր Միքայէլի համար այդ զրկանքը, բայց նա լուռ տանում էր, ամեն բան ծածկելով իւր սրտի մէջ, որտեղ ոչ ոք չէր կարող տեսնել և որտեղից ոչ ոք չէր կարող գողանալ։

Երկար տատանումից յետոյ, վերջապէս նա ներս մտաւ կնոջ սենեակը։ Զոքանչը և կինը թէյ էին խմում, իսկ որդին ննջում էր օրօրոցի մէջ։ Մայը և աղջիկ սեւեռեցին աչքերը Միքայէլի վրայ և զարմացմամբ նայում էին նրան թէ ինչ պիտի ասի. նրանց մէջ անցաւ այս միտքը թէ Միքայէլը եկել է իրանց ոտքերն ընկնելու, աղաչելու, պազատելու, որ դադարեցնեն խռով լինելը, նրանք գիտէին նրա թոյլ բնաւորութիւնը և բարի սիրտը և սպասում էին նրա աղաչանքը լսելու բայց Միքայէլը չնայեց անգամ ոչ կնոջը և ոչ զոքանչին, այլ մօտեցաւ օրօրոցին, բարձրացրեց երեխայի երեսի ծածկոցը և նայեց մանկանը։ Ո՜հ, ինչքան անուշ, ինչքան անմեղ քնած էր նա։ Կարօտալից հօր սրտում անցաւ մի խորին զգացմունք...

Մայը ու աղջիկ ուզում էին վրայ վազել, արգելել Միքայէլին մանկանը նայելը, բայց զսպեցին իրանց, նրանք նոր բան էին սպասում Միքայէլից։

Միքայէլը նայեց մանկանը, նայեց և հայրական սրտից դուրս բղխեցին մի զոյգ արտասուք, որ շտապով թագցրեց, ապա ծածկեց երեխայի երեսի ծածկոցը և դարձաւ դէպի կինը.

—Հը՜, ինչ ես ուզում, ուր ներս եկար, ասաց կինը կոպտարար։

Այդ ժամանակ Միքայէլի դէմքի գոյնը փոխուեցաւ, աչքերը դուրս թափուեցան, շրթունք-

ներն սկսան դողալ, բայց և նա զսպեց իրան։

—Ո՞ւր եկա՛, ինչ եմ ուզում, այս բոպէիս, ասաց Միքայէլը և ուղղակի մոտեցաւ կնոջը, յառելով իւր բարկութեամբ լի աչքերը երբեմն կնոջ, երբեմն Մարթայի վրայ։

Մայը և աղջիկ վախեցան նրանից և երկուսըն էլ վեր թռան տեղներից։

—Հ՞ը, մեզ սպանելու հո չե՞ս եկել, ինչ ես այդպէս վրայ վազում, ասաց մայրը։

—Չէ, ես ընդունակ չեմ սպանելու եթէ ընդունակ լինէի, վաղուց կը սպանէի. ես եկել եմ մի քանի բան միայն հարցնելու, մի քանի տեղեկութիւն ստանալու, մի՛ վախենաք։

—Մենք ինչ հախ ու հէսաբ ունենք իրար հետ, որ բան հարցնէք։

—Ինչպէս չէ, մենք հախ ու հէսաբ շատ ունենք, որ անուշադիր եմ թողել մինչև օրս, բայց որ էլ չեմ կարող թողնել. համբերութեան բաժակը արդէն լցուած է, էլ համբերել չի կարելի։ Մինչև հիմա ես լռեցի ձեր արարմունքից, բայց էլ չեմ լռի, մինչև հիմա կեանքս մաշեցի ձեզ համար, բայց էլ չեմ տանջի, հերիք էր ինչ օրեր որ ինձ քաշել տուիք, էլ այն օրերը չէք քաշեցնիլ տալ, արդէն բաւական է։

—Ի՞նչ օրեր, ինչեր ես ասում. ոտքով գըլխով դու ես մեղաւորը և էլի դու ես խօսում։

—Այդ մի կողմը թողնենք. ես իրրև աղջկանդ մարդը, նրա տէրը, հարցնում եմ քեզ, որ

ովետև դու ես նրան դեկավարողը, ո՞ւր էիք երէկ մինչև կէս գիշեր և կամ ո՞ւր էք շուտ շուտ տնից հեռանում և ինչ է նշանակում ձեր բացակայութիւնը։

—Հա՛, հա՛, հա՛, դիւական մի քըքիչ արձակեց տիկին Մարթան,—այ քեզ օյին, դու ո՞վ ես որ հարցնում ես, կամ ես որ քեզ աղջիկ եմ տուել, հո չեմ ասել, թէ նրան բանտարկիր և հացի ու ջրի ումուտով թող. խելքի արի, փեսայ, ինչեր ես ասում, մի ժամանակին էլ մտիկ տուր է... այդ կնիկ է որ դու պահում ես, և հիմայ էլ ուզում ես ոտքերը շղթայ ձգել, որ տանից չդուրս գա՛յ...

—Ես քեզ հարցնում եմ և պահանջում եմ յայտնել ինձ թէ ո՞ւր էիք երէկ երեկոյ. եթէ չես յայտնի, ես միջոց կը գտնեմ ձեզ այդ ասեցնել տալու։

—Ի՞նչ ես դուրս տալիս, միջոցներ ունես գործ դիր, տեսնենք ինչ ես անում։

—Ի՞նչպէս թէ ինչ եմ անում, ես այս բոպէիս քեզ դուրս կը վռնդեմ տանից։ ես երկու կին չեմ ուզել, այլ մէկ. դու այստեղ ամենևին գործ չունիս, որ իմ ընտանեկան գործերիս մէջ խառնուես և վրդովես իմ խաղաղութիւնը. չլինէիր դու, այս երկպառակութիւնը չէր լինի. դու ես, որ մոլորեցնում ես աղջկանդ և ծուռ ճանապարհի վրայ կանգնացնում։

—Ի՞նչ ծուռ ճանապարհի վրայ, կը հաս-

տատես այդ, դու գիտես, որ դրա համար բանտ կը նստես։

—Դուրս իմ տանից, անամօթ կին, գոռաց Միքայէլը և բարկութեամբ ձեռքը սեղանին խփեց։

Սօնան, որ մինչև այդ ժամանակ լուռ էր, այժմ իւր աչքերը սևեռեց Միքայէլի վրայ և բարկացած գոռաց.

—Համարձակես մօրս դուրս անել, դու ով ես որ մօրս սիրտը կոտրում ես, տո քաղցած ու տկլոր անպիտան։

—Ի՞նչպէս, և դու. շատ լաւ, այսօր վերջին օրը կըլինի և մօրդ ոտքերը այլ ես իմ տան շէնքը չեն կոխի, իսկ եթէ դու լուռ կըմնաս և խոնարհ, մնա, ապա եթէ ոչ ահա ճանապարհը, ասաց Միքայէլը և ուզում էր դուրս դնալ, երբ երեխան սկսեց լալ. Միքայէլը անդիտակցօրէն կռացաւ դէպի մանուկը, այդ ժամանակ Սօնան յարձակուեցաւ ամուսնու վրայ, բռթեց նրան մի կողմը և խլեց մանկանը։

—Դու դնա կորիր, այս մանկան հետ գործ չունիս։

—Հը՛մ, գործ չունիմ, կըտեսնենք, ասաց նա ու դուրս եկաւ սենեակից։

XVI

Մինչդեռ Միքայէլը ծրագիրներ էր կազմում զոքանչից ազատուելու և սենեակ էր որոնում իրան համար, Մարթան ուրիշ կարգադրութիւններ էր անում։ Միքայէլի դուրս գնալուց յետոյ Մարթան կրկին իւր ընդհատուած թէյը շարունակեց և դառնալով աղջկան ասաց.

—Ի՞հ, հոգեմ դրա գլուխը, մենք էլ դրան մարդատեղ ենք գցում, դա էլ բրքրում է, այդպէս է ու այդպէս, թող կրկին պատճառը դա դառնայ, երբ որ ուզում է բաժանուել, մենք էլ կըբաժանուենք և դրա սև երեսը չենք տեսնի, այսօր և եթ կը տեղափոխուենք Փանոս աղայի մօտ։

Սօնան տատանուում էր, նա դեռ ոչինչ չէր խօսում։

—Հ՞ը, ինչ ես սուս կացել, մի՞թէ մարդուցդ վախենում ես, արխային կաց, նա քեզ ոչինչ չի կարող անել, թէ ուզում է, թող գնայ դանդատ անէ, էլի ոչինչ չի կարող տանել, թող հասկանայ որ կնիկ որ ուզում են, պահել էլ է հարկաւոր և ոչ թէ տկլոր ու քաղցած վայր ձգել։

—Հէ, մայրիկ ջան, ես էլ գիտեմ որ դա ոչինչ չի կարող անել, շնորհք չունի, բայց...

—Բայց ինչ, Փանոս-աղան հօ ամեն օր աղաչանք պաղատանք է անում և խօսք էլ է տալիս որ քեզ վրայ կը պսակուի, էլ ինչ ես ուզում։

—Իսկ հասարակութիւնն ինչ կասի։

—Ի՞նչ պէտք է ասի, թող ինչ ուզում է ասի. դու քո բանը առաջ ձգիր, էգուց էլօր ով գիտէ ինչ է պատահում։

—Բայց չէ՞ որ նա մեր երեխայի կնքահայրն է։

—Ի՞նչ անենք որ...

—Ցետոյ, եթէ նա ուզենայ պսակուել, կը հասնի որ...

—Ցիմա՛ր, դու էլ բան ասացիր։ Մինթէ չը-գիտես որ փողը, հարստութիւնը ամեն բան կը հասցնի։

—Լաւ, ես համաձայն եմ, ասաց Սօնան։

—Ես հէնց այս րոպէիս կըտեսնեմ Փանոս-աղային և մինչև երեկոյ կը տեղափոխուենք նրա մօտ, թող ինչ ուզում է անի Միքայէլը, թէկուզ գլուխը քարով էլ տայ... և Մարթան հաղնուելով դուրս գնաց Փանոս աղային տեսնելու։

Երեք ժամ չանցած տիկին Մարթան ու Սօնան տեղափոխուեցան Փանոս աղայի բնակարանը, իրանց հետ տանելով Միքայէլի որդուն և տնային բոլոր թանկագին իրերը։ Միքայէլը տանը չէր, նա դեռ տեղեկութիւն չունէր այդ բաներից։

XVII

Միքայէլը տուն եկաւ և այդ բոլոր էլ առաւ. նրա սիրտը ճմլուեց, բարկութիւնից ատամները կրճտացրեց, գլուխը պտոյտ եկաւ և աչքերը մթնեցին։ Բայց ինչ կարող էր անել, ձեռքիցը ոչինչ չէր դուրս գալ. այն զէնքերով, ինչով որ կռւում էին իւր կինը և զորանչը— նա չէր կարող կռուել, նա ընդունակ չէր այդպիսի զէնք գործ ածելու։ Երկու ճանապարհ միայն կար իրարից ազատուելու, վերջ տալու այդ խայտառակութեանը, և այդ ճանապարհը կամ նրանց կամ իրան սպանելն էր, բայց այդ միջոցին չէր ուզում դիմել, որովհետև զգում էր որ անընդունակ է և դորան։ Ի՞նչ անէր նա, գոնէ իւր մանկանը, իւր շառաւիղը տարած չլինէին, նրա ամենեին հոգսը չէր որ կինն էլ էր փախել, նա արդէն վաղուց ձեռքերը լուացել էր նրանից, բայց իւր սեպհական երեխան էլ չկար, որի մէջ գտնէր իւր սփոփանքը, որին նայելիս փարատէր իւր վշտերը։

Խորհուրդ տուին որ դատով պահանջի որդուն և նա դատ բացաւ կնոջ դէմ և զաւակը պահանջեց։ Բայց իւր հակառակորդ՝ Փանոս աղան ուժեղ էր, նա փող ունէր և այդ փողով կռւում էր Միքայէլի բարոյականութեան դէմ,

այն ինչ միւս կողմից կինը, և զոքանչը առիթ չէին փախցնում նրան վիրաւորելու։

Սօնան արդէն պճնուել էր և թանկագին զգեստներ հագած օրը մի անգամ կառքով Փանոս աղայի հետ միասին զբօսանքի էր գնում 'ի տես Միքայէլի։ Տիկին Մարթան և Սօնան արդէն կորցրել էին իրանց երեսի ամօթը. նրանք էլ չէին քաշւում հասարակութեան կշտամբանքից, գոյութեան յաղթանակը տարել էին, անբարոյականութեան կռիւը գերազասել էր բարոյականութեանը, ոչնչացնելով Միքայէլի թէ պատուասիրութիւնը և թէ նոյն ինքն իրան։

Համարեա շուտ-շուտ պատահում էր իւր կնոջը և Փանոս աղային կողք կողքի նստած կառքի մէջ և մի արհամարական ժպիտ արձակելիս նրա սիրտը կտոր-կտոր էր լինում։ Գլուխը իջեցնում էր ցած, աչքերը խոնարհում գետին, ոհ, նա կորած ու ոչնչացրած էր համարում իրան, էլ ինչու համար էր ապրում աշխարհիս երեսին։ Անագորոյն բաղդը շատ խիստ կերպիւ հալածեց իրան, էլ չդիմացաւ նա այդ հարուածներին։ Նա արդէն հալւում էր։ Սոսկալի թոքախտը արդէն ձգել էր իւր սերմերը նրա թոքերի մէջ որ կամաց-կամաց ընդլայնում և մեծանում էր այնտեղ, օր աւուր կարճելով Միքայէլի ջահէլ կեանքը։ Նրա կեանքը մի թելի վրայ էր կախուած, նա մի իղձ ունէր, մի ցանկութիւն, և այդ ցանկութիւնը իւր մանկանը

դգուելն էր, մեծացնելը և ապա թէ մեռնէր է հոգ չէր։

Դատարանը վճռեց մանկանը յանձնել հօրը՝ և նա սրտատրոփ սպասում էր ցանկալի այդ օրին...

(Նոթեասվաց) կողք-կողք
Բաղդ դոգ յոգոիկմ
Եմ

XVIII.

Փանոս աղայի ճոխ և ընտիր կերպով կահաւորուած սենեակներից մէկում, բազմոցի վրայ, թեկն տուած նստած է տիկին Մարթան. նրա առաջ քնած է մանուկը։ Տիկին Մարթան սաստիկ վրդովուած է, նա յօնքերը իջեցրած ունի և մտածում է։ Աղջիկը տանը չէ, նա միայնակ է տան մէջ և անհամբեր սպասում է աղջկան։

Կիւրակէ օր էր այդ օրը և Սօնան Փանոս աղայի հետ գնացել էր, այն ինչ կօֆէի ժամանակը անցնում էր։

—Ի՜հ, ինչ եղան նրանք, ինչի՞ ուշացան, մրթմրթաց Մարթան քթի տակ և անհամբերութեամբ դուրս նայեց. այդ ժամանակ զզզալով կառքը կանգ առաւ դրան մօտ և քիչ յետոյ լսուեցաւ զանգի զիլ ձայնը և ծառան վազեց դուռը բանալու։

Անուշահոտ ջրերով օծուած, թանկագին զգեստներ հագած տուն ընկաւ մօր սենեակը Սօնան և արագութեամբ ետ անելով ձեռնոցները ժպիտը երեսին հարցրեց մօրը.

—Հ՞ը, մայրիկ, շատ ուշացանք ա՛յ, բայց այնքան բազմութիւն կար Մուշտայիդում, որ ամենևին չէի ուզում գալ։

—Ի՞նչ վնաս, կը մնայիք, ինձ հօ գայլերը չէին տանի։

—Շատ սխալուեցար, մայրիկ, որ չեկար։

—Վնաս չկայ, աղջիկս, միւս անգամ ես էլ կը գամ, դու ջահել ես, դու օր տես, թէ չէ այն անիծուածի ձեռքին տանջուեցիր։ Հա՛ ինչ եղաւ Փանոս աղան։

—Նա ինձ տուն բերեց և ինքը գործի գնաց. կէս ժամից յետոյ ինքն էլ այստեղ կը լինի։

—Դէհ, հրամայիր կօֆէն բերեն մինչև նա էլ կը գայ։

—Իսկոյն, մայրիկ, ասաց Սօնան և դուրս գնաց ծառային հրամայելու և շորերը փոխելու։ Հինգ րոպէ չանցած նա արդէն նստած էր մօր մօտ և վայելում էր սուրճը։

—Է՜, այդպէս հա՛, վազը պէտք է երեխայիցդ ձեռք վերցնես և ուղարկես հօրը։

—Չէ, մայրիկ, ես չեմ կարող, այդ ինձ համար ծանր է. նա չի կարող երեխային պահել։

—Յետո՛յ. ինչպէս կարող ես չյանձնել, նա պրիստաւով կը խլի քեզանից։

—Ա՜խ, անիծուի դա, ինչ է ուզում մեզանից. մի չմեռաւ էլ, որ դրանից պրծնէինք։

—Ուր է թէ շուտով մեռնէր։

—Չէ, մայրիկ, ես դրան իմ երեխին կենդանի չեմ տալ։

—Բա ինչ կանես։

—Աւելի լաւ կը համարեմ դիակը յանձնել, քան կենդանի տալ որ չարչարի։

—Շատ էլ լաւ կանես, ճիճինի կը դայ և դարդիցը հոգին կը փչի և քո ճանապարհն էլ բաց կը լինի։

—Բաս ինչպէս անենք։

—Ինչպէս պիտի անենք, այդ ես գիտեմ։

—Յետոյ որ իմանան։

—Տուտուց, քիչ փող ունի Փանոս աղան, որ վախենում ես, փողին զօր կանի և ամեն բան կը թաղնուի, հօ գիտես, որ Փանոս աղան էլ աչքով աչք չունի որդուդ հետ։

Վճռեցին և արին։ Հետեւեալ օրը լուր ուղարկեցին Միքայէլին, թէ որդիդ յանկարծակի վախճանուել է, եթէ ցանկանում է թող գայ դիակը տանի։ Միքայէլը նախ չհաւատաց և ապա երբ տեսաւ մանկական դագաղը, այն ժամանակ երկու ձեռքով գլխին խփեց և երկու օր շարունակ փակուած մնաց սենեակում։

Ոճիրը ոչ ոք չիմացաւ, բժիշկը հարկ եղած վկայութիւն էր տուել։

XIX

Արև, ինչու դու ծագում ես, ճնճղուկ, ինչու դու ճուռոցում ես, բլբուլ, ինչու դու երգում ես ուրախ տաղեր, կեանք, ինչու բարախում ես սրտիս մէջ. ո՜հ, էլ մի երգիր դու, սոխակ, արև, խաւարի, կեանք, դաղարի գոյութիւն ունենալուց... աւաղ, հանգիստ կեանքի էի կարօտ, ես ապրել էի ուզում անխռով կեանքով, բայց ի՞նչ մնաց ինձ, ի՞նչ օրի հասայ ես. կեանքիս թելը կտրւում է, ես մօտենում եմ գերեզմանին, ես մեռնում եմ, այդ զգում եմ ես, անագորոյն թոռաթը կեղեքում է սիրտս. իսկ վիշտը, անողորմ վիշտը, փուլթացնում կարճեցնելու կեանքս. ո՜հ, ի՞նչ ես դու, կեանք, ի՞նչու համար տուեցիր ինձ և ի՞նչու համար կարճում ես գոյութիւնս, ի՞նչու համար ապրեցայ և ի՞նչու համար պիտի մեռնիմ... Ապրեցայ, այո՛, ես էլ աշխարհ տեսայ, ես էլ արևի լոյսը տեսայ, շնչեցի բնութեան թարմ ու ազատ օդը, հոգով սաւառնեցի դէպի վեր, տիեզերքի անհուն տարածութիւնը, բայց յետոյ... Յետոյ վիշտ ու հոգս, հոգս ու վիշտ և ապա մահիճ, պէպի մեր կեանքի վախճանը, այն վախճանը, որի անունն անգամ սառեցնում է ամենաբի հոգուն... ո՜հ, ձանձրալի է ինձ կեանքը, այն սոսկալի և թշուառ

կեանքը, որ ես վարեցի, բայց ես չեմ ուզում մեռնիլ, չեմ ուզում գերեզման մտնել, այն գերեզմանը, որտեղ մտնողին մոռանում են ամենքը։ Մի քանի ախ ու վախ և ամեն ինչ կը վերջանայ... Բայց ով ունիմ, որ գոնէ վերջին ժամերս մխիթարի, գոնէ մի կաթիլ արտասուք թափի գերեզմանիս վրայ. կինս—ո՜հ, նա Փանոս աղայի անառակ գիրկը գերադասեց իմ համեստ կեանքին. որդիս, որին ինձանից շուտ գերեզման ճամփեցին, նա գնա՛ց, կորա՛ւ, էլ չի զարթնի, ինչպէս և ես չեմ զարթնի յաւիտեան... Ահա, տեսնում եմ, այստեղ մահճակալիս մօտ կանգնած է հոգէառ հրեշտակս, նրանից յաւիտենական սառնութիւն է փչում, երակներիս մէջ սառչում է արիւնս, սիրտս դադարում է բարախելուց, բայց ես չեմ ուզում մեռնել, ես պէտք է ապրեմ, ես կարօտ եմ ապրելուն..

Այդպէս մտածում էր Միքայէլը և մահուան տաղնապի մէջ շուռ ու մուր գալիս անկողնում։ Սոսկալի հազը խեղդում էր նրան, արիւնը անընդհատ դուրս էր ժայթքում նրա բերանից և ըստէ առ ըստէ նուազեցնում նրան։

Որդու մահուանից յետոյ նա վարձել էր Հալաբարում մի սենեակ ամսական երեք ռուբլիով, ուր հիւանդութիւնը սաստկանալով ընկել էր մահիճ և նրան միակ խնամողը մնացել էր պառաւ տանտիկինը՝ Քալօն։ Քալօն որդի չունէր, բարի և ժամասէր կին էր. նա «իւր հոգու

համար» խնամում էր Միքայէլին, նրա հիւանդ ժամանակ։ Իրրև իսկական մայր անտրտունջ խնամում էր և իւր աղօթքի մէջ Միքայէլին առողջութիւն խնդրում։ Մի ամբողջ ամիս էր Միքայէլը պառկած էր հիւանդ և նրա դրութիւնը օր ըստ օրէ ծանրանում էր։

—Մայրիկ, մի թողնիր ինձ մեռնելու, ես մեղք եմ, դիմեց նրան Միքայէլը։

—Ի՞նչ անեմ, որդի, պատասխանեց Քալօն և երեսը խաչակնքեց. նա տեսաւ որ Միքայէլի դրութիւնը շատ ծանր է։

—Բաց արա պատուհանը, վերջին անգամ էլ նայեմ լոյս աշխարհին... ո՜հ անագորոյն դրութիւն։

Քալօն բաց արաւ պատուհանը. այն ինչ Միքայէլը իւր ապականման աչքերը մեծ բանալով յառեց դէպի դուրս, դէպի լոյս, ուր եռում էր կեանքը, ուր տիրապետում էր արևի կենարար լոյսը... նա մարած աչքերով նայում էր լոյսին, նրա աչքերը շլանում էին այդ լոյսից, և անկատելի կերպիւ. կամաց կամաց, գնում էին լոյսի ետևից, ապա մի ակ քաշեց ու լոյսի հետ գնաց դէպի դուրս, նա անցաւ պատուհանի միջով, դուրսը շրջան կազմեց, վեր նայեց, այնտեղ էր լոյսը։ Մեծ և Ցաւիտենական լոյսը։ Կենդանութիւն և ջերմութիւն էր գալիս այնտեղից, նա թռաւ վեր, հեռու հեռու, դէպի անհուն երկինքը և ապա կարճ ժամանակից յետոյ

անյայտացաւ երկնային կապտութեան մէջ. ձուլուեց, խառնուեց եթերի հետ, կորաւ, անյայտացաւ աշխարհից... նա մեռաւ... Պառաւ Քալօն մի զոյգ արտասուք միայն թափեց և փակեց Միքայէլի աչքերը...

Աշխարհս նոյնը մնաց, թէև մի մարդ պակասեց...

XX

Փանոս աղան ուրախ տրամադրութեան տակ, գլանակը ծխելով շրջում էր իւր առանձնասենեակում։ Նա այսօր մի մեծ գումար էր ստացել, որ կորած էր հաշուում։

—Հ՜ըմ, ասում էր նա ինքն իրան, ամեն բան լաւ է գնում, ինչ մտածում եմ յաջողւում է, մնում է Սօնիչկիս բանը վերջացնել, պսակուել նրա հետ, և ինչի՞ չը պսակուել, ինչն է պակաս, բոյը թէ բուսաթը, ի՞նչ անենք թէ մարդուցը խլեցի և ի՞նչ արժանի էր որ այս տեսակ անգին մարգարիտը նրա գրկումը լինէր և ինչ լայեղ էր նրան։ Հէ, պէտք է աշխատած շուտ

պսակուել սրա հետ, որ ասա-կոսէներին էլ վերջ դնենք, թէև ես դրանց նշանակութիւն չեմ տալիս։

—Ի՞նչ անեմ, քանդուի օրէնքը. անպիտան քահանաները որ չեն պսակում, որ այդտեղ էլ փողը զօրութիւն չունի, ես ի՞նչ անեմ։ Քսան թուման տէր X...-ի տակը դրի, բայց բան չը-շինուեց, երեսուն թուման էլ տէր Y...-ը կե-բաւ, էլի բան չդուրս եկաւ, իսկ տէր Z-ը քիչ փափուկ է, տեսնենք բան կը դուրս գայ թէ ոչ։

Այդ մտածմունքի մէջն էր Փանոս աղան, երբ ներս մտաւ Սօնան և փաթաթուելով նրան, ասաց.

—Ի՞նչ կը տաս մի լաւ լուր հաղորդեմ։

—Ի՞նչ որ քէֆդ տայ, պատասխանեց Փա-նոս աղան իւր փոքրիկ աչքերը պտտեցնելով։

—Մի լաւ դերիացու կառնեմ։

—Ջուխտ աչքիս վրայ։

—Միքայէլը մեռել է։

—Դէ արի ճակատիցդ համբուրեմ, վերջա-պէս, ասաց Փանոս աղան և մի համբոյր դրոշ-մեց Սօնայի ճակատին։

Արդէլրը վերացած էր սև յաղթութիւնը կա-տարեալ և Փանոս աղան կարճ ժամանակից յե-տոյ պսակուեցաւ Սօնայի հետ։

1892 թ.

ԱԵՐՈՒՍ

ՀՀ Ազգային գրադարան
NL0321550

Հոյն հեղինակի ստանձին գրով տպուած աշխատութիւնները

---

1. ԱԶՈՏ ԵՐԿԱՔ, պատմական վէպ ա. և բ. մասն մի գրքի մէջ բ. տպագրութիւն (տպուած) գինն է . 1 բ.
2. ՀԻՒՍԻՍԻ ՍՐԾԻԲԸ պատմական վէպ 1801 1829 թ. Կովկասի տիրապետութեան հարիւրամեակի յիշատակին գինը . . . 1 բ.
3. ՏԱՆՋԱՆԵՒ ԲՈՎԻՑ, վէպ իրական կանքից գինը . . . 30 կ.
4. ՄՈՒԹ ԽՈՐՋԵՐԻՑ, դրոյց (տպուած) կ. 5 կ.
5. ՊԻԱՏՐԱ ԱԲՄԱ կամ խանձուած քար, Կարմէն Սիրմայից, թարգմանութիւն (տպուած) կ. . . 5 կ.
6. ՍԵՒ ԱՅԳԹԱՆԱՑ, վեպիկ գինը . . 25 կ.

Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Багратъ Айвазянцу.

Վերոյիշեալ գրքերը վաճառւում են Կենդրոնական գրավաճառանոցում, իսկ Բաքուում գ. Յովհաննէս-Պաղանչեանի մօտ։

ԳԻՆԸ Է 25 ԿՈՊԵԿ